Azg
armenian daily

18 ՄԱՐՏ 1998 ՇԱԲԱԹ # 47 (1550)

Ռուսաստանի նախագահը հեռաձգում է ԱՊՀ գագաթաժողովը

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը բժիշկների հանձնարարությամբ այսօր Համագործակցության գծով գործընկերներին առաջարկել է ԱՊՀ գագաթաժողովը, միասնացման «քառյակի» ղեկավարների եւ Ռուսաստանի ու Բելառուսի Միության հանդիպումները տեղափոխել ապրիլի երրորդ տասնօրյակ:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, նախագահը կառավարության փոխնախագահ Իվան Ռիբկինին, ԱՊՀ-ի մասնակից պետությունների հետ համագործակցության նախարար Անատոլի Ադամիշինին եւ արտաքին գործերի առաջին փոխնախարար Բորիս Պաստուխովին հանձնարարել է մոտ ժամանակներս այցելել Համագործակցության երկրների մայրաքաղաքներ՝ շարունակելու աշխատանքը ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստի, ինչպես նաեւ միասնացված «քառյակի» եւ Ռուսաստանի ու Բելառուսի Միության բարձրագույն խորհրդի համապատասխան փաստաթղթերի վրա եւ համաձայնեցնել այդ միջոցառումների նոր ժամկետները:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Մարտի 30-ին կտիրի՞ նույն աշխուժությունը

Անցողիկ գույքը՝ Ռոբերտ Քոչարյան, Կարեն Դեմիրճյան, պատվավոր 3-րդ տեղը Սերգեյ Բաղդասարյանին

ԱՐԻՍ ՂԱՋԻՆՅԱՆ

ՍՊՈՒՆԴԱՐՅԱՆ

Այսօրվանից արդեն հստակորեն կարելի է պատրաստվել ՀՀ նախագահական ընտրությունների երկրորդ փուլին: Այն կկայանա մարտի 30-ին, եւ եթե այս ընթացքում արտառոց ոչինչ չարձանագրվի, ապա հենց Ռոբերտ Քոչարյանն ու Կարեն Դեմիրճյանը, որպես երկու մրցակից, ստիպված կլինեն ճշտել իրենց քաղաքական հաշիվները: Ինչպիսի՞ն կլինի բնակչության միջամտությունը այդ մրցակցությանը: Մարտի 16-ի ընտրություններին մասնակից էր ողջ ընտրազանգվածի 65 տոկոսը: Հենց առաջին իսկ հայտնի տվյալներից երեք թեկնածու հիշյալներից զատ նաեւ Սերգեյ Բաղդասարյանը, զգալիորեն առաջ մղվեցին մնացյալներից, այդ թվում, որքան էլ տարօրինակ է, Վազգեն Մանուկյանից: Օրվա ընթացքում՝ ժամ առ ժամ արձանագրվելիք վիճակագրությունը մեծ փոփոխություններ չէր ենթադրում եւ էապես չազդեց ձայների վերաբաշխման վրա: Այս կամ այն թեկնածուի անվան դիմաց բերված ցուցանիշները ամրագրված էին բավականին կայուն վարկով եւ տեղով: Ու որքան էլ ժամանակ առ ժամանակ փոփոխվեին բոլոր թեկնածուների անձնական վարկանիշները, այնուամենայնիվ Ռոբերտ Քոչարյանը մնում էր առաջին տեղում, Կարեն Դեմիրճյանը երկրորդ, Սերգեյ Բաղդասարյանը երրորդ, իսկ Վազգեն Մանուկյանը չորրորդ: Վիճակագրությունը, ուղղակի բացառում էր որեւէ թեկնածուի հաղթանակ առաջին փուլում: Վիճակագրությունը նաեւ մի հսկայական սահման գծեց տարաձայնությունների եւ փաստերի միջեւ: Նման խախտվածությունը տեղի տվեց անուղղակի կասկածների որոնք ոչ հեռու անցյալի տխուր հիշողություններ արթնացրին ընտրողներից եւ թեկնածուներից ոմանց մոտ:

Տես ► էջ 2

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչապետը դատապարտում է անօրինականության ցանկացած փորձ

Մարտի 16-ին տեղի ունեցան ՀՀ նախագահի արտահերթ ընտրություններ, որին մեր քաղաքացիները ցուցաբերեցին ակտիվ մասնակցություն՝ արտահայտելով իրենց վստահությունը ընտրությունների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, ընտրությունները անցան բնականոն եւ օրինականության շրջանակում:

Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ Հայաստանում դեռեւս լիովին չեն ամրապնդվել ընտրությունների անցկացման ժողովրդավարական ավանդույթները, ինչը բացթողումների եւ խախտումների տեղիք է տալիս: Դրանով է պայմանավորված ընտրություններում միջազգային դիտորդներ ներգրավելու մեր ցանկությունը, եւ այն, որ մենք կարեւորում ենք նրանց անկողմնակալ գնահատականը ընտրությունների ազատ եւ արդար լինելու վերաբերյալ:

Անհրաժեշտ է զերծ մնալ ընտրությունները որակող վաղաժամկետ եւ անհիմն հայտարարություններից, քանի դեռ միջազգային դիտորդները չեն արտահայտել իրենց կարծիքը եւ քանի դեռ չեն կայացվել դատական վճիռներ՝ ընտրությունների ընթացքում տեղ գտած դեպքերի վերաբերյալ:

Վստահեցնում եմ, որ մարտի 16-ի ընտրությունների ընթացքում գրանցված բոլոր միջադեպերը մանրակրկիտ քննության կառնվեն եւ մեղավորները կպատժվեն օրենքով սահմանված կարգով: Արդեն իսկ քրեական գործեր են հարուցվել մի քանի միջադեպերի կապակցությամբ: Ես դատապարտում եմ ընտրություններում անօրինականության դրսեւորման ցանկացած փորձ եւ հայտարարում եմ, որ պետությունը երաշխավորում է ընտրությունների ազատ եւ արդար ընթացքը:

«Արդարություն եւ միասնություն» համագործակցության հայտարարությունը

Մարտի 16-ի նախագահական արտահերթ ընտրությունների առաջին փուլն ընթացավ բնականոն հունով, օրինականության սահմաններում, իսկ առանձին տեղամասերում արձանագրված խախտումներն էական ազդեցություն չեն կարող ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա: Գտնում ենք, որ նշված խախտումները թույլ տված անձինք պետք է պատասխանատվության ենթարկվեն օրենքի ողջ խստությամբ:

Մտահոգություն առաջացրեց թերեւս ՀՀ նախագահի որոշ թեկնածուների հայտարարությունը, որտեղ նշվում է, թե ընտրություններն «անկախ արդյունքներից, չեն կարող համարվել ազատ ու արդար»: Եվ դա ասվում է մարտի 16-ի երեկոյան, երբ անգամ տեսականորեն հնարավոր չէր գնահատել խախտումների հնարավոր ազդեցությունը քվեարկությունների արդյունքների վրա:

Ակնհայտ է, որ այդ հայտարարությունը չարամտորեն կասկածի տակ դնելով ընտրությունների ողջ ընթացքը, հետապնդում է զուտ կոնյունկտուրային նպատակներ եւ կարող է օգտագործվել արտաքին որոշակի ուժերի կողմից:

Հայտարարությունն ստորագրող թեկնածուների շարքում կան մարդիկ, որոնց՝ ընտրություններին մասնակցելու նպատակն իսկ երկրում քաղաքական իրավիճակի աղակայունացումն ու հասարակության առողջացման խոչընդոտումն է: Զարմանալի է, որ նրանց են միացել քաղաքական գործիչներ, որոնք ներդրում ունեն Հայաստանում ժողովրդավարության հաստատման եւ զարգացման գործում:

Հույս ենք հայտնում, որ քաղաքական կամք դրսեւորելով, նրանք կվերանայեն իրենց դիրքորոշումները եւ օբյեկտիվ գնահատական կտան երկրում ընթացող քաղաքական զարգացումներին՝ հանուն մեր երկրի կայունության:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍՄԿՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱՍԱՐՈՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանցի դիտորդները ընտրությունները համարում են օրենքին համապատասխան

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Միջազգային դիտորդներ, Ռուսաստանի Դաշնության ԿԸՀ անդամ Ռաիֆ Բիկտագիրովի եւ ՈԴ ԿԸՀ միջազգային կապերի վարչության խորհրդատու Ի. Ելանովի կարծիքով, ընտրությունները Հայաստանում տեղի են ունեցել օրենքին համապատասխան:

Զրույցի ժամանակ նրանք հայտարարեցին, որ ընտրությունների օրը եղել են երեւանի եւ նրան մերձակա շրջանների բազմաթիվ ընտրական տեղամասերում: Դրանցից եւ ոչ մեկում, ընտրողների բարձր ակտիվության պայմաններում, դիտորդները չեն նկատել ակնհայտ խախտումներ: Տեղամասերում թեկնածուների վստահված անձանց հետ շփումների ժամանակ նույնպես խախտումների մասին վկայող որեւէ փաստական նյութ չի ներկայացվել:

Մեկնաբանելով նախագահության թեկնածուների հայտնի հայտարարությունը, թե «ընտրությունները անցել են մեծ չափերի հասնող օրինախախտումներով, կեղծումների եւ ահաբեկումների մթնոլորտում», Ռ. Բիկտագիրովը եւ Ի. Ելանովը նշեցին, որ նման հայտարարությունը պահանջում է հաստատումներ՝ կազմված արձանագրությունների, վկաների ցուցմունքների, ընտրողների դիմումների ձեւով եւ այլն: Այդ իմաստով, նշեցին նրանք, ՀՀ ԿԸՀ նախագահ Խաչատուր Բեգիրջանի այն հայտարարությունը, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ստուգումը կարող է կազմակերպվել միայն փաստաթղթային համապատասխան հաստատման ներկայացմամբ, միանգամայն օրինաչափ է:

Աժ նիստը չեղավ

Ազգային Ժողովի մարտի 17-ի հերթական նիստը չկայացավ քվորումի բացակայության պատճառով: Նիստից պատգամավորների բացակայությունը, հավանաբար, բացատրվում էր հանրապետությունում տեղի ունեցող նախագահական ընտրություններում նրանց ակտիվ մասնակցությամբ: Խորհրդարանի հերթական նիստը տեղի է ունենալու մարտի 18-ին, որի ընթացքում, Աժ կանոնակարգի համաձայն, կառավարության անդամները պատասխանելու են պատգամավորների հարցերին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՄԱՌՈՏ

ԵԱՀԿ-ում գովում են Հայաստանում նախընտրական օրինակելիությունը

Օրերս կայացած ԵԱՀԿ մշտական խորհրդի 157-րդ լիագումար հանդիպման օրակարգում քննարկվեց նաեւ Հայաստանում նախագահական ընտրությունների նախապատրաստման ընթացքը: Քննարկման ընթացքում ելույթ ունեցավ ԵԱՀԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ, դեսպան Դեյվիդ Ջոնսոնը, որը դրվատեց Հայաստանում կայանալիք ընտրությունների նախապատրաստման ընթացքի բաց եւ թափանցիկ բնույթը, որը կարող է նույնիսկ օրինակ հանդիսանալ ԵԱՀԿ մյուս անդամ պետությունների համար: Դեսպան Ջոնսոնն ընդգծեց, որ Միացյալ Նահանգները ողջունում է Հայաստանի իշխանությունների նման կեցվածքը:

Խաղաքարտի վրա են Ադրբեջանում 30 միլիարդ դոլարի օտարերկրյա ներդրումները

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հայերը դուրս են գալիս ընտրելու իրենց նոր նախագահին» խորագրով հոդվածում «Նյու Յորք թայմսը» այսօր մասնավորապես գրում է. «Ընտրարավին մոտիկից հետեւում են արտասահմանում, որ խաղաքարտի վրա են դրված Ադրբեջանում 30 միլիարդ դոլարի օտարերկրյա ներդրումները»:

«ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ԹԱՅՄՍ»

«Հայաստանում մարդիկ սպասում են փրկարարի»

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հայաստան. քվեատուները միջոց են որոնում խուսափելու աղետից, չքավորությունից եւ քաոսից» վերնագրով հոդվածում «Լոս Անջելես թայմս» թերթը գրում է.

«Դեմիրճյանը միակ թեկնածուն է խորհրդային անցյալից, որն այժմ հայերից ոմանք հիշում են որպես խաղաղության եւ բարգավաճման կոչած ոսկեդար: Քոչարյանին մեծ չափով նեցուկ են երեւանում, ուր տնտեսական վերականգնման նշաններն ակնհայտ են: Քոչարյանը, որը Լեռնային Ղարաբաղի նախագահն էր նախքան Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնն ստանձնելը, ցույց է տվել, որ բարեկարգիչ է եղել Հայաստանում իր իշխանության անցյալ մեկ տարվա ընթացքում:

Նախագահության թեկնածուներից միայն Դեմիրճյանն է, որ հստակ կերպով չի հայտարարել իր քաղաքականությունը Ղարաբաղի նկատմամբ, խուսանավումների հնարավորություն թողնելով, եթե հարցի ընտրությունների: Դիվանագետները Հայաստանում ասում են, թե հենց միայն դրա համար նա նախընտրելի թեկնածու է Ադրբեջանի եւ նավթարդյունաբերության մեծ մրցակցության բնագավառի այրերի համար:

Դեմիրճյանը վերադարձ է հայտնելու, թե ինչու է որոշել վերադառնալ քաղաքական ասպարեզ: «Մարդիկ իմ կարիքն ունեն», ասել է նա: Եվ երբ հարցրել է արվել, թե ինչպե՞ս է ֆինանսավորվել իր ընտրարավը, պատասխանել է. «Օրինականորեն»: Եվ ապա ժպտալով ավելացրել՝ դա շատ ծախսատար չէ, մենք շատ չենք ծախսում ծանուցումների եւ կամ այլ միջոցների վրա, մենք ուղղակի դիմում ենք մարդկանց:

Այս խորհրդավորությունը հայերից ոմանց այն կարծիքին է հանգեցրել, որ Դեմիրճյանը, ինչպես հարեւան Ադրբեջանի ու Վրաստանի նախկին կոմունիստ ղեկավարներ Հեյդար Ալիեւն ու Էդուարդ Շեւարդնաձեն, որոնք վերահիրացան իշխանությանը 1990-ական թվականների սկզբներին, լուրջ աջակցություն է ստանում Հայաստանի հյուսիսային մեծ հարեւան Ռուսաստանից: Հայերից ոմանք այն համոզման են, որ Մոսկվան ցանկանում է, որ համեմատաբար հաճոյակատար մի շրջանային ղեկավար լինի այնտեղ՝ իրազեկ ու փորձված Կրեմլի ուղիներին, հավելյալ լծակներ ձեռք բերելու համար հակամարտության այդ տարածաշրջանում, որտեղ դեռեւս շահագրգռություններ ունի:

Քոչարյանն ասել է, որ վստահ չէ՝ ինչպիսին կարող են լինել Մոսկվայի հետ իր տարեց ախոյանի կապերը: «Ես ուղղակի տեղեկություն չունեմ, ասել է նա: Դա նրա գործն է եւ նրա խնդիրը, սակայն, ցանկանում է ղեկավար, առաջնորդ լինե՞լ, թե՞ տեղում՝ Մոսկվայի մարդը»: Սակայն նա ասել է նաեւ, թե իրեն զարմանք են պատճառել Դեմիրճյանի թեկնածությունը եւ նրա ժողովրդականությունը:

Դա իր բացատրությունն ունի, շարունակում է թերթը: Հայաստանում մարդիկ, դժբախտաբար, ապրում են դժվարին պայմաններում եւ սպասում են փրկարարի:

digitised by A.R.A.R.@

ընտրություններ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Խաչատրյան. «Այս պահին հիմքեր չկան ընտրություններն այս փուլում չեղյալ հայտարարելու համար»

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահի թեկնածու, ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը մարտի 17-ին հանդես է եկել հայտարարությամբ ՀՀ նախագահի արտահերթ ընտրությունների մարտի 16-ի քվեարկության նախնական արդյունքների վերաբերյալ:



Հ. Խաչատրյանը հավաստում է, որ իր ղեկավարած կուսակցությունը, սանալով քվեարկության ամբողջական արդյունքները, կգնահատի այս քվեարկության իրական արդյունքներն ու շեղումները, դրանք կներկայացնի լայն հասարակությանը, հետամուտ լինելով գրանցված փաստերի եւ հարուցված իրական գործերի անաչառ եւ հրապարակային քննությանը: Միաժամանակ նա նշում է, որ նկատվող թերությունները եւ զանցանքները կանխելու փոխարեն այս ընտրությունների ընթացքը կասեցնելուն ուղղված քայլերը համարում է «անպատեհ, ժամանակավրեպ եւ անհեռանկար»:

«Քվեարկության ընթացքում առանձին տեղամասերում անկասկած եղել են բացթողումներ, օրինախախտումներ, ընտրողների կամքի վրա թելադրանք եւ նույնիսկ բռնություն կիրառելու դեպքեր, այս կամ այն թեկնածուի օգտին հանցավոր ճանապարհով լրացուցիչ ձայներ գրանցելու փորձեր: Դեպքերի վերաբերյալ կազմված են արձանագրություններ, հարուցված են իրական գործեր», ասված է հայտարարության մեջ:

Նախագահի թեկնածուն, նշելով, որ «զանազան նեղ եւ հակադիր շահերով համեմված հաղթող մրցապայքարում» իր եւ իր համախոհների ակնկալած «մտքի հեղափոխությունը» չկայացավ, ավելացնում է. «Հենվելով այս պահին առկա նյութերի, ընտրությունները վերահսկելու «Սահմանադրական իրավունք» միության բազմամյա փորձի վրա կարծում եմ, որ տեղի ունեցածը էապես չի ազդում առաջին տեղերը զբաղեցնող թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա, եւ այս պահին հիմքեր չկան ընտրություններն այս փուլում չեղյալ հայտարարելու համար»:

Արտաշես Գեղամյանը կոչ է անում ջուր չլցնել օտարի ջրաղացին



ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ազգային հեռուստատեսության «Լրաբեր» ծրագրով մարտի 17-ին ՀՀ նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանը հայտարարություն արեց, որն, իր իսկ բնորոշմամբ, խորհրդածություն էր կատարված նախագահի մի շարք թեկնածուների հայտնի հայտարարության հետ:

Չվիճարկելով իր գործընկերների դիրքորոշումը, որը վերջիններս հրապարակել են ընտրությունները դեռ չամփոփված լինելու պայմաններում, Ա. Գեղամյանը հարց է տալիս, թե ում էր այս բոլորը ծեռնտու:

«Ի սկզբանե, մենք ուզում ենք ասել, որ ով էլ ընտրվի նախագահ, նա լեգիտիմ չէ, թե ի սկզբանե ուզում ենք ասել, որ հայ ժողովուրդն ինքնուրույն կերպով ի վիճակի չէ ընտրել իր նախագահին: Եվ եթե ինքնուրույն կերպով ի վիճակի չէ ընտրել, ապա մեզ օգնողներ կգտնվեն: Եվ համոզված եղեք, այդ օգնողները, ամենեւին, հայ ժողովրդի շահերը չեն հետաքրքրի: Նրանք կհետաքրքրեն իրենց նավթային, տարածաշրջանային շահերը», ասվում էր հայտարարության մեջ:

Թեկնածուն կոչ արեց ժողովրդին զգոնության եւ զսպվածության, նախագահի բոլոր թեկնածուներին իրենց ստացած ձայների տոկոսները ավելի վեր չդասել, քան հայ ժողովրդի բախտն ու ճակատագիրն է, իսկ ամենաշատ ձայներ ստացած թեկնածուներ Ռ. Քոչարյանին եւ Կ. Դեմիրճյանին հանդիպել, հրապարակավ զրուցել, որ «բացարձակապես ոչ ոք չփորձի այս իրավիճակում շագանակները կրակից հանել ուրիշի ձեռքերով»:

Ամբաստանությունները անհիմն են

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ամերիկայի ձայնի» թղթակից Միշել Քելեմանը իր ռադիոկայանին հայտնելով Հայաստանում նախագահի ընտրությունների մասին, նշել է, որ ընտրողները շոշափել են երկու խնդիր՝ տնտեսական վիճակը եւ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման հարցում նոր նախագահի անելիք քայլերը: Բազմաթիվ ամբաստանություններ են եղել քվեները խարդախելու մասին, սակայն դիտորդները դժվարանում են որոշակի կարծիք հայտնել այդ ամբաստանությունների լրջության վերաբերյալ: Նրանք իրենց կարծիքը կհայտնեն քվեների հաշվարկումն ավարտվելուց հետո:

ԵԱՀԿ-ն 170 դիտորդ ունի Հայաստանի տարածքում, որոնք նկատած մի քանի անկանոնությունների ներկա են եղել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Խաչատուր Բեգիրջանը ասել է, թե իր կարծիքով տեղի են ունեցել ընտրական գործընթացի խախտման մասնակի դեպքեր միայն:

Քելեմանը խոսել է նաեւ նախագահական թեկնածուների այն բողոքի նամակի մասին, որում ասվել է, թե այս ընտրություններն ազատ ու արդար չեն, ավելացնելով, որ այդ բողոքը որոշակի փաստեր չի ներկայացրել: Բոլորը գիտակցում են, որ ազատ եւ արդար ընտրությունները կարեւոր են փոխելու համար այն վատ համբավը, որին Հայաստանը արժանացել էր:

ԶԼՄ-ներն ավելի ծառայել են թեկնածուների շահերին, քան ընտրազանգվածին

Ըստ եվրոպական լրատվամիջոցների դիտարկումների

Երեկ ժուռնալիստի միությունում լրագրողների հետ հանդիպման էր ներկայացել եվրոպական ինստիտուտի լրատվամիջոցների դիտարկման եւ աջակցության բաժինը, որ հայկական կողմի ներկայացուցիչներ Կարեն Մարտիրոսյանի, Մարկ Գրիգորյանի գլխավորած մասնագիտական խմբի եւ «Ազատություն» ռադիոկայանի (Պրահա) մեկնաբան էլիզաբեթ Ֆուլերի հետ համատեղ դիտարկել են ՀՀ լրատվամիջոցների կողմից նախագահական ընտրությունների լուսաբանումը: Դիտարկումները անցկացվել են փետրվարի 23-ից մարտի 15-ը, իսկ երկրորդ փուլի դեպքում դիտարկումները շարունակվելու են մինչեւ մարտի 29-ը:

«Ազատություն» ռադիոկայանի թղթակիցը նախ համոզմունք հայտնեց, որ 96-ի համեմատ այս ընտրություններն անցել են ազատ եւ արդար, իսկ հայաստանյան լրատվամիջոցների վերաբերյալ նշվեց, որ այս ընտրություններում առավել ուշադրություն են դարձրել ընտրարշավի իրավական եւ կազմակերպչական կողմին, քան առանձին թեկնածուների քաղաքական կողմնորոշմանը: Նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում, ըստ եվրոպական ԶԼՄ-ների դիտարկումների, ՀՀ լրատվամիջոցներն ավելի մեծ տեղ են հատկացրել թեկնածուների ընտրարշավի բուն ընթացքին, քան կենսական խնդիրների լուսաբանմանը: Նշվեց, որ լրատվամիջոցների կողմից հրապարակային քննարկումներ չեն կազմակերպվել, որոնց ընթացքում թեկնածուները կարող էին բանավիճել հիմնախնդիրներին առնչվող իրենց մոտեցումների շուրջ, որը հնարավորություն կտար ընտրողներին ծանոթանալու նրանց տարբեր դիրքորոշումներին: Պետական լրատվամիջոցներն, ըստ նրանց, գործել են ընտրական օրենսդրության սահմաններում՝ բոլոր թեկնածուներին հավասար պայմաններով, սակայն, այնուամենայնիվ առանձնացվեց, որ ազգային հեռուստատեսության խմբագրական լուսաբանումը եւ լրատվական թողարկումները բավարար չափով արդարացված չեն եղել ծավալի եւ մատուցման որակի տեսակետից: Եվրոպական լրատվամիջոցների գնահատականով Հայաստանի լրատվամիջոցների մեծ մասը չի ունեցել ընտրարշավը լուսաբանելու հստակ ռազմավարություն, սակայն դա միտումնավոր չի արվել, այլ տեղեկություն ստանալու համար կախման մեջ են ընկել նրանց ընտրարշավի կազմակերպիչներից: Այսինքն՝ նրանց խոսքերով, լրատվամիջոցներն ավելի շուտ ծառայել են թեկնածուների շահերին, քան ընտրազանգվածի շահերին, քանի որ չեն եղել թեկնածուների ծրագրերի համեմատական խոր վերլուծություններ, որպեսզի ընտրողները կարողանան պարզել ծրագրերի առկա տարբերությունները:

Պատշաճական քարոզարշավի ընթացքում եվրոպական ԶԼՄ-ների անցկացրած քանակական վերլուծությունները փաստել են, որ պետական հեռուստատեսությունը մեծ ծավալով է լուսաբանել 12 թեկնածուներից հինգին: Ամենաշատ խմբագրական եթերաժամանակ տրամադրվել է Ռոբերտ Քոչարյանին 18,98 տոկոս, Պարույր Հայրիկյանին՝ 15,01 տոկոս, Կարեն Դեմիրճյանին՝ 9,32 տոկոս, Վազգեն Մանուկյանին՝ 8,43 տոկոս եւ Սերգեյ Բաղդասարյանին՝ 6,64 տոկոս, իսկ մնացած 7 թեկնածուներին տրամադրվել է 6,25 տոկոս եւ ավելի պակաս:

Դիտարկող խմբին դժգոհություններ են հայտնել, որ Ազգային ռադիոյի տնօրենն իր աշխատակիցներին հրահանգել է մինչեւ քարոզարշավի պատշաճական մեկնարկը՝ մարտի 7-ը, տեղեկատվական թողարկումներից բացի, որեւէ այլ դեպքում չհիշատակել թեկնածուներից ոչ մեկի անունը:

Անդրադառնալով տպագիր լրատվամիջոցների քանակական վերլուծությանը, նշեցին, որ մյուս թեկնածուներից առավել շատ լուսաբանվել է Ռոբերտ Քոչարյանը: Մասնավորապես վկայաբերեց «Առավոտ» օրաթերթը, որը քարոզարշավին նախորդող շրջանում Քոչարյանին 3-4 անգամ ավելի շատ է լուսաբանել, քան Մանուկյանին կամ Հայրիկյանին եւ 10 անգամ ավելի շատ, քան Դեմիրճյանին: Իսկ բուն քարոզարշավի փուլում նյութերի 25,71 տոկոսը նվիրվել է Քոչարյանին, 14,7 տոկոսը՝ Մանուկյանին եւ 10,51 տոկոսը՝ Դեմիրճյանին: «Հայաստանի Հանրապետություն» պատշաճաթերթի եւ մասնավորապես Արմենպրես գործակալության խմբագրական նյութերի 25-26 տոկոսը նվիրվել է Ռոբերտ Քոչարյանին եւ 4-7-ական տոկոս՝ Դեմիրճյանին, Մանուկյանին եւ Պարույր Հայրիկյանին:

«Հայոց աշխարհ» թերթն իր խմբագրական նյութերում Ռ. Քոչարյանին չորս անգամ շատ տեղ է հատկացրել, քան Դեմիրճյանին, իսկ Դեմիրճյանի մասին նյութերը գերազանցապես բացասական են եղել: «Այժմ» շաբաթաթերթը երկու անգամ ավելի շատ է տեղ հատկացրել Մանուկյանին, քան Քոչարյանին, իսկ Դեմիրճյանին չի անդրադարձել: «Ազգ» թերթի համար առայժմ ոչինչ նշված չէր, բայց հետագայում բոլոր թերթերի վերաբերյալ հրապարակավ տեղեկությունները հաղորդվելու են, սակայն ավելացնենք, որ ըստ եվրոպական լրատվամիջոցների ներկայացուցիչների դիտարկումների, հայաստանյան թերթերը հիմնականում լուսաբանել են երեք թեկնածուներին, սակայն հրապարակումներում արտահայտված չեն եղել նրանց նախընտրական ծրագրերի գաղափարական տարբերությունները:

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Մարտի 30-ին կտիրի՞ նույն աշխուժությունը

Սկիզբը էջ 1

Այժմ կարիք չկա խոսելու «հինգ+երկու» հայտարարության, դրան հաջորդող Աղվան Վարդանյանի մեկնաբանությունների եւ վերջ ի վերջո Ռոբերտ Քոչարյանի հայտարարության մասին: Տվյալ դեպքում ավելի կարեւոր է պարզել այսօրվա ընտրողի հոգեկան կարգավիճակը, որը մարտի 30-ին նորից պետք է մոտենա քվեատուփին: Կնկատվի՞ նման աշխուժություն, թե ո՞չ: Այս հարցի պատասխանը գլխավորապես պայմանավորված է բոլոր թեկնածուների տրամադրություններով եւ այն քաղաքականությամբ, որն այս կարճ ժամանակահատվածում կորդեգրի այս կամ այն թեկնածուն: Եթե արտառոց ոչինչ չկատարվի, ապա նախադրյալներ կան ընտրազանգվածի ավելի պասիվ դառնալու հեռանկարի:

Մյուս կողմից վտանգ կա, որ երկրորդ փուլը կդառնա անձնավորված ընտրություն, ոչ թե հօգուտ այս կամ այն քաղաքականության (սոցիալական, ազգային, ժողովրդավար եւ այլն), այլ ընդդեմ սրան կամ նրան: Թեկնածուների հանդեպ ընտրողի կողմից ցուցաբերվելիք համակրանքը կամ հակակրանքը (ինչը բնականաբար կարեւոր է) կարող է դառնալ բախտորոշ եւ վճռել ընտրության ելքը: Մարտի 17-ի երեկոյան հայտնի էին քվեարկողների 60 տոկոսի ձայները, որոնք տեղաբաշխված էին հետեւյալ կերպ. առաջին տեղում է Ռոբերտ Քոչարյանը (38,60 տոկոս), այնուհետեւ Կարեն Դեմիրճյանը (28,05 տոկոս), Սերգեյ Բաղդասարյանը (14,42 տոկոս) եւ քառյակի վերջում Վազգեն Մանուկյանը (11,90 տոկոս): Նվազագույն վարկանիշները արձանագրված են Ասոս Բլեյանի (0,11 տոկոս), Արամ Սարգսյանի (0,18 տոկոս), Յուրի Մկրտչյանի (0,18 տոկոս), Հրանտ Խաչատրյանի (0,21 տոկոս), Վիգեն Խաչատրյանի (0,32 տոկոս), Արտաշես Գեղամյանի (0,39 տոկոս) եւ Դավիթ Շահնազարյանի (0,45 տոկոս) ազգանունների դիմաց: Պարույր Հայրիկյանի ընտրազանգվածը կայունորեն երաշխավորում է 5-6 տոկոսը:

Նույն ժամի տվյալների համաձայն, բերված են նաեւ ցուցանիշներ ըստ մարզերի, որոնց տոկոսայնությունը հավանաբար չի փոխվի:

Երեւանում առաջին տեղում է Կարեն Դեմիրճյանը (50,061), այնուհետեւ Ռոբերտ Քոչարյանը (39,215) եւ Վազգեն Մանուկյանը (16,887): Մայրաքաղաքում ամենից ցածր վարկ ունեն Ասոս Բլեյանը (100), Արամ Սարգսյանը (203), Հրանտ Խաչատրյանը (295) եւ Վիգեն Խաչատրյանը (296): Չնչելով թվային ցուցանիշները (նյութը չծանրաբեռնելու նպատակով), ընդգծենք միայն մարզերի դիրքորոշումը, կարծում ենք արդեն որոշված սկզբունքի անխախտությամբ.

1. Արագածոտն՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Բաղդասարյան,
2. Այրարատ՝ 1. Քոչարյան, 2. Մանուկյան, 3. Բաղդասարյան,
3. Արմավիր՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Բաղդասարյան
4. Գեղարքունիք՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Բաղդասարյան,
5. Լոռի՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Բաղդասարյան
6. Կոտայք՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Բաղդասարյան,
7. Շիրակ՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Բաղդասարյան,
8. Սյունիք՝ 1. Քոչարյան, 2. Մանուկյան, 3. Դեմիրճյան,
9. Վայոց Ձոր՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Մանուկյան,
10. Տավուշ՝ 1. Քոչարյան, 2. Դեմիրճյան, 3. Մանուկյան:

Ինչպես երեւում է, մարտ 17-ի երեկոյան դրությամբ հանրաքվեության տասը մարզերից 6-ը միմյանցից ոչնչով չեն տարբերվում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբին կից ստեղծված քաղաքացիների ընդունելության կենտրոնը շարունակելու է աշխատանքը մարտի 18-ից, ժամը 9:00-21:00-ը:

Կենտրոնի հասցեն. Խանջյան փողոց 50, Թեմելյան կենտրոն, հեռախոսներ՝

57-47-57, 57-37-89:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յողումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ընտրական

ԱՍՈՒԼԻՍ

Հզգակի հայտարարությունը զգաստացնելու համար էր

Ասում է Պարույր Հայրիկյանը

Նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի՝ յուրահատուկ օդերևութիվությամբ ԻՄ Կենտրոնական գրասենյակում հրավիրած առաջին հեռընտրական ասուլիսը «շատ լավատեսական խոսքերով» սկսվեց՝ հինգ թեկնածուների նախորդ օրն ընդունած ու նաև իր ստորագրությունը կրող հայտարարությանը հակառակ ազդարարելով, որ «մեր հանրապետության, ժողովրդի կյանքում պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան ամենաժողովրդավարական եւ համեմատաբար արդար ընտրությունները»: Թեեւ որոշ երեւույթներ սվերել են ընդհանուր պատկերը, Հայրիկյանը հավատում է, որ դրանք ընդամենը սվերներ են. Արարատի հայենի դեմքերին առնչվող իր նախնական կրքոտ, խիստ ինքնադատական հայտարարության պես, այս հայտարարությունն էլ նոթատակ ուներ չեզոքացնել այդ սվերները:

Դեռ մինչեւ ընտրությունները տագնապ կար, որ ամեն ինչ հարթ չի ընթանում (ընտրակաբաժ, նվիրատվություններ քաղաքացիներին եւ այլն), ընտրությունների ժամանակ էլ ահազանգեր ստացվեցին որոշ քաղաքացիների մի քանի անգամ ընտրելու, սպառնալիքների, ծեծկռտուքների դեպքերի եւ այլ օրինախախտումների վերաբերյալ, բայց, չնայած նման այդ երեւույթները սովորաբար իշխանությունների հետ են կապվում, չի կարելի այդ ամենը միանշանակ Ռոբերտ Քոչարյանի ու նրա թիմի վրա բարդել, քանզի միակողմանի բնույթ չեն կրել:

Երեկոյան, Աջափնյակի տեղամասերից մեկում տեղի ունեցած հայենի ծեծկռտուքից հետո թեկնածուների հանդիպման ժամանակ (հարցերից պարզվեց, որ վերջինիս նախաձեռնողը Վազգեն Մանուկյանն էր) ներկայացված հայտարարության նախագիծը, ըստ Հայրիկյանի, չափազանց խիստ էր, գրված «միանշանակ դատապարտողի» դիրքերից, «մեծ չափերի հասնող օրինախախտումների, կեղծումների եւ ահաբեկումների» կոնկրետ հասցեատեր ուներ. «իշխանության տարբեր օղակներ, ինչպես նաեւ նրանց աջակցող տարբեր կազմակերպություններ եւ քրեական տարրեր»: Սա անհիմն էր, քանզի ներկայացված փաստերը կարող էին հավատի համարվել դատարանի կողմից հաստատվելուց հետո միայն: Ինքը չէր կարող ստորագրել նման հայտարարության տակ, եւ բանակցություններից հետո կարողացավ մեղմել շեշտադրումները՝ մերժելով ուղղակի մեղադրանքները իշխանությունների հասցեին: Արդարացի կլիներ, եթե Ռոբերտ Քոչարյանը նույնպես մասնակցեր այդ հանդիպմանը եւ համապատասխան պարզաբանումներ տար, սակայն նա «ծանր հիվանդ էր» (Տավուշում մրսել էր), ասաց Պարույր Հայրիկյանը՝ նշելով, որ անցումը օրինախախտումների մթնոլորտի արձանագրումից բուն հայտարարությանը («ՀՀ նախագահական արտահերթ ընտրությունները, անկախ արդյունքներից, չեն կարող համարվել ազատ եւ արդար»), պետք է ավելի բարեհունչ լիներ, «թեական» շեշտադրումով, մոտավորապես այսպես. եթե ընտրությունները շարունակվեն նույն ոգով, չեն կարող ազատ եւ արդար համարվել:



Այլ կերպ ասած, ԻՄ նախագահի կարծիքով, հայտարարությունը կանխարգելիչ նպատակ ուներ եւ ընդունվել էր իրավապահ մարմինների արագ արձագանքն ապահովելու ակնկալիքով: Օրինախախտումների դեպքերի «ազդարարման գործընթացը» որոշակի դրական ձեռքբերումներ, առաջընթաց է արձանագրում, «որի մասին չխոսելը նշանակում է ոչ միայն չար, հոռետես, այլեւ ինչ-որ տեղ վիրավորված կամ բարդույթավորված լինել», նշեց Հայրիկյանը, առայժմ հրապարակված արդյունքները (որոնց համաձայն, նրա ստացած քվեները 5-6 տոկոս են կազմում-Լ. Պ.) սպասելի համարելով եւ հիշեցնելով, որ «ինքը խոստացել էր տեղ գրավել առաջին հնգյակում»: Ըստ նրա, 5 տոկոսից պակասը «կատաստրոֆիկ», 5-8 տոկոսը՝ բավարար, 8-15 տոկոսը՝ լավ արդյունք կլիներ իրենց համար, մասնավորապես ֆինանսական (ընտրական գրավը հետ բերելու) առումով:

Ինչեւէ, «հայտարարությունը միանգամայն ուղղված չէ որեւէ ուժի դեմ, չնայած գլխավոր պատասխանատուն մնում են իշխանությունները», զգաստացնող առաքելություն ունի, եւ ԻՄ-ը հավատարիմ կմնա իր ծրագրերին՝ անկախ նրանից, թե ում ձեռքում կլինեն գործադիր լծակները: Կարեւորը ժողովրդավարության հաստատումն է, իսկ մնացածը ածանցյալ է: «Այսօր էլ ես շնորհավորում եմ Ռոբերտ Քոչարյանին եւ Կարեն Դեմիրճյանին, բայց կուզենայի, որ այդ շնորհավորանքն առանց վերապահումների լիներ», ասաց ԻՄ նախագահը:

Լրագրողների հարցերն, այնուամենայնիվ, «անընդունելի» ի հայտ բերին փաստերով չհիմնավորված, Հայաստանի իմիջի համար խիստ վտանգավոր հայտարարության տակ Պարույր Հայրիկյանի ստորագրության, եւ իր կողմից բազմիցս ինքնադատված Կարեն Դեմիրճյանի հետ նույն փաստաթուղթը ստորագրելու առնչությամբ: Հայրիկյանը չեզոքացրեց «մեղադրանքը», ինքը Ֆանտիկոս չէ, եւ գաղափարական տարբերությունները չեն նշանակում, որ հակառակորդների հետ նույն հայրենիքում չի ապրելու, կամ որ քաղաքական գործիչը դիմացինին պետք է սատանա համարի: Բացի այդ, ոչ թե ինքն է ստորագրել փաստաթուղթ, որի տակ ստորագրել է Կարեն Դեմիրճյանը, այլ հակառակը:

Հարցուպատասխանից պարզվեց նաեւ, որ Պարույր Հայրիկյանն, այնուամենայնիվ, հանդիպել է Ռոբերտ Քոչարյանին, թեեւ իր վերաբերմունքը փոխել էր դրանից առաջ, նկատի ունենալով, որ «ԿԸՀ-ն այս անգամ շատ ավելի լավ աշխատեց, օրինախախտումների վերաբերյալ ահազանգերը «միանգամից դարձնելով հասարակության սեփականությունը»»: Բոլոր դեպքերում, Հայրիկյանը բնական համարեց զգաստացման կոչը՝ «քվեաթերթիկների զանգվածային գողությունը համարելով պետական հեղաշրջման փորձ, ընտրությունների արդյունքների վիճարկման «պատերազմական» ելքը (խոսքը քաղաքացիական պատերազմի վտանգի մասին է)՝ բացառված եւ անընդունելի, քանզի «եթե հարցեր կան, պետք է լուծվեն ժողովրդավարական ճանապարհով»:

Պետք է հուսալ, որ ԻՄ նախագահի ասուլիսն իր հերթին «զգաստացնող» ազդեցություն կունենա իր մրցակից-գործընկերների հաղթեղ, որոշակիորեն ջղագրգիռ հակազդեցության վրա:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՈԵՊԼԻԿ

Իշխանության գինը

Երբ 1996-ի սեպտեմբերյան դեպքերի ժամանակ ԱԺ աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտինյանի հեռուստաթերթում շարունակ հայտնվող դեմքը սարսափահար վկայում էր Վազգեն Մանուկյանի կանաչ փայլ արձակող աչքերի մասին, բոլորս, որ գտնվում էինք ցանկապատների այս կողմում, պարզապես հունից դուրս էինք գալիս այդչափ անամոթ հայտարարությունից: Բայց երբ մարտի 15-ի գիշերային հեռուստաթերթում հայտնվեցին Դավիթ Շահնազարյանի աչքերը, կանխավ ճանաչարիը զիջելով Շավարշ Քոչարյանին, պարզ դարձավ, որ նախընտրական զուգընկերային պայքարի այս վերջակետը սկիզբն է հաջորդ փուլում արտավիժվող անհանդուրժողականությանը: Լյուդմիլա Հարությունյանը «Ազգի» փետրվարի 14-ի համարում մեր թղթակցի հետ ունեցած զրույցում հայտարարում է. «Միակ պարտվողը կլինի այն գուշակը, որը պատմեց վաս աղագայի մասին»: Ում մասին է այդ պահին խոսում հանրահայտ սոցիոլոգը, այլ հարց է, բայց պատասխանն ինքնին սփոփում է ուշադրության առնել. թե ովքե՞ր են զբաղված տխուր կանխագուշակումներով:

Բոլոր ժամանակներում իշխանության հասնելու ճանապարհին ընկած են եղել արյունն ու պիղծ խաղերը: Կայսերասպանների որվականները շարունակում են բայլել երկրագնդով: «Քաղաքակրթության» դարաշրջանում տախտակախող անելու ավանդույթը փոխարինվեց իրար վրա ցեխ շպրտելու քաղաքականությամբ: Իսկ հայենի է, որ վաս խոսքը ինչքան էլ մաքրես, միշտ բիծ է թողնում: Մեր քաղաքագետներին հաջողվում է պառակտում ստեղծել կասկածամտություն սերմանելով: Եվ դա հաստատվում է ազգային շահերից ելնելով: Մենք ամենից քիչ կարիք ունենք մասնատման: Մինչդեռ մեր բնակիչները շատ լավ գիտեն, թե որտեղ է մեր թուլությունը, ու պառակտումը կատարում են բնականաբար ոչ իրենց ձեռքով: Իշխանությունը գայթակղիչ բան է, բայց կարիք չկա դրա դիմաց տրորել մի բան, հանուն որի իբր նվիրաբերում ես կյանքդ: Այդ խարանը հետո հետս չի լինի պոկել, որովհետեւ դա դաջվում է շատ ավելի մեծ, լայն հասկացողությունների վրա, քան մի կուսակցությունն է: Դրանք են ժողովուրդը եւ հայրենիքը: Անհանդուրժողականությունն անմենամեծ ախտն է, որ քայքայում է: Անհանդուրժողականություն է հենց այն, որ առանձին միավորների թվում է, հենց իրենց է տրված փրկչի դերը, իսկ մյուսները ստորոտում կանգնած անհրաժեշտ մահկանացուներ են: Այս մտայնությունը հրաժարական տված (բայց արդյո՞ք հեռացած) վարչախմբին օտարեց եւ անցանկալի դարձրեց:

Ղարաբաղյան հարցը այն լակմուսի թուղթն է, որ արտացոլվում է իշխանության ճշմարիտ գործունեությունը: Այդ գործընթացում պիտի տեր լինել մեր գեներին, որոնցում դրոշմված է սեփական ուժի եւ արժանապատվության գիտակցությունը, որոնք վեր են ամեն տեսակ քաղաքակիրթ ռեւերանսներից: Իսկ հերթական անգամ հրապարակ նետվող կասկածի ոռը, թե թեկնածուներից մեկն առաջադրվում է իբրեւ վերջին շանս, եւ եթե նա էլ ոչինչ չկարողանա անել, ուրեմն դա վերջն է, անհնարինության հաղթանակը, պարզապես մերժելի է, դա քաղաքական ինքնասպանություն է:

ԱՆՈՒՇ ՊԱՍՏԵՆ

Տեսընտրական չափազանցություններ...

Ընտրությունների գործընթացի լարվածությունը գագաթնակետին է հասել, եւ նախընտրական շաբաթում տիրող նյարդային մթնոլորտն ինքնին հասկանալի է: Սակայն ընտրությունների՝ իրենց թեկնածուների անվերապահ հաջողությանը չափազանց վստահ որոշ մասնակիցներ չափազանցությունների մեջ են ընկնում: Կարեն Դեմիրճյանի նախընտրական շաբաթում, օրինակ, Լ. Ազոյանը, պատմելով ընտրություններում տեղ գտած «ճչացող օրինախախտումների» մասին, ասաց, որ իրենց թեկնածուն, դատելով տեղերում ցույց տրված ընդունելությունից, ստանալու էր քվեների առնվազն 70 տոկոսը: «Քանի որ երեք այլ թեկնածուների (Սերգեյ Բաղալյան, Վազգեն Մանուկյան եւ Պարույր Հայրիկյան) նախնական տոկոսների գումարը գերազանցում է 30 տոկոսը, արդյոք դա նշանակո՞ւմ է, որ Ռոբերտ Քոչարյանն ընդհանրապես ձայներ չէր ստանալու» հարցին պրն Ազոյանը պատասխանեց. «Եթե արդար ընտրություններ լինեին, Բլեյանից մի քիչ ավել էր ստանալու»...

Ենթադրում ենք, որ Կարեն Դեմիրճյանն այլ կարծիքի է: Իսկ պրն Ազոյանին հիշեցնենք, որ մենք էլ լուսնից չենք իջել, հարեւաններ, ծանոթներ եւ ընկերներ ունենք. «երբեմն-երբեմն» հետաքրքրվում ենք ընտրողների կարծիքով եւ, ըստ այդմ, կարող ենք գնահատել ուժերի գոնե մոտավոր բաշխումը թեկնածուների միջեւ...

Լ. Պ.

ՄԱՐԶԵՐ

Գյումրիում քվեարկել է ընտրողների թվի կեսից ավելին

ԳՅՈՒՄՐԻ, 17 ՄԱՐՏ: Գյումրիի համայնքային հանձնաժողովում ընտրական տեղամասերից ստացված ամփոփիչ արձանագրությունների տվյալներով, քաղաքում ընտրողների համեմատաբար ճշված ցուցակային թիվը կազմել է 113300 մարդ: Մարտի 16-ի ընտրություններին քվեարկությանը մասնակցել է 58 հազար մարդ կամ ընտրողների ընդհանուր թվի 51,2 տոկոսը: Այստեղ արտահայտված չեն միայն մեկ տեղամասի ամփոփիչ տվյալները, որոնք մեր հարցման պահին դեռ ճշված չէին:

Ըստ համայնքային հանձնաժողովի ունեցած նախնական տվյալների, գյումրեցիները ամենից շատ քվեներ տվել են նախագահի թեկնածուներ Կարեն Դեմիրճյանին՝ 19504 ձայն եւ Ռոբերտ Քոչարյանին՝ 18424 ձայն: Դա կազմում է համապատասխանաբար 33,6 եւ 31,8 տոկոս: Երրորդը Վազգեն Մանուկյանին տված ձայներն են (8508), չորրորդը Սերգեյ Բաղալյանինը՝ 5638, հինգերորդը Պարույր Հայրիկյանինը՝ 4358:

Ամբողջ Շիրակի մարզի քվեարկության նախնական արդյունքների մասին տվյալներ խոստացան հայտնել միայն մարտի 18-ին:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Տղավորություն

Աբովյան քաղաքում, որտեղ բնակչությունը զգալի ակտիվություն ցուցաբերեց նախագահական արտահերթ ընտրություններին, անկախ դրանց արդյունքներից՝ թերեւս կարելի է գնահատել 1988 թ. ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրությունների համեմատությամբ առավել անաչառ եւ ազատ: Ներկա եմ եղել երեք ընտրական տեղամասերում, որտեղ նկատելի էր մարդկանց ոգեւորությունն ընտրությունների նկատմամբ եւ չկային խորհուրդ տվողներ ու ճնշում գործադրողներ:

ԷՄՄԱ ԲԵԳԻՏՅԱՆ

Լոռու մարզում շատ են Քոչարյանի, Վանաձորում՝ Դեմիրճյանի ձայները

Ինչպես տեղեկացանք Լոռու մարզային ընտրական հանձնաժողովից, ընտրությունների ժամանակ մարզում էական խախտումներ չեն գրանցվել: Ըստ նախնական տվյալների, 221000 ընտրողից մասնակցել են 129965-ը (58,8 տոկոս), իսկ Վանաձորում 96790 ընտրողների 53 տոկոսը՝ 52098 հոգի:

Լոռու մարզում Բլեյանը ամենից շատ ձայն է հավաքել Վանաձորում՝ 57, իսկ որոշ քաղաքներում, օրինակ, Ալավերդիում՝ ընդհանրապես ձայն չունի:

Լոռու մարզում եւ Վանաձորում ձայները բաշխվել են.

	մարզ	տոկոս	Վանաձոր	տոկոս
Ս. Բաղալյան	15579	11,99	4655	8,93
Ա. Բլեյան	145	0,11	57	0,1
Ա. Գեղամյան	501	0,39	213	0,4
Կ. Դեմիրճյան	45877	35,3	19599	37,61
Հ. Խաչատրյան	258	0,2	139	0,26
Վ. Խաչատրյան	334	0,26	143	0,27
Պ. Հայրիկյան	10827	8,33	5733	11
Վ. Մանուկյան	7256	5,58	2780	5,37
Յու. Մկրտչյան	207	0,16	76	0,14
Դ. Շահնազարյան	420	0,32	141	0,27
Ա. Սարգսյան	243	0,19	78	0,14
Ռ. Քոչարյան	48318	37,18	18484	35,47

ՄԱՆՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ամփոփագիր

– «Էիս էմպրես» ռուսերեն շաբաթաթերթը ներկայացվում է «Դելովոյ էմպրես» անունով (էջ 23): Իրականում, ուսումնասիրության տվյալների հավաքման ժամանակահատվածում (15 հունիս-30 սեպտեմբեր) թերթը լույս էր տեսնում «էիս էմպրես» անունով: Նոր անունով առաջին անգամ երեւան եկավ հոկտեմբերի 31-ին:

– «Երեւան թայմս» անգլերեն թերթի հիմնադիրներ են հայտարարվում Արմենպրես գործակալությունն ու թերթի աշխատանքային կոլեկտիվը, թերթի չափը A-2 ֆորմատ (էջ 24):

Իրականում թերթի հիմնադիրներն են Արմենպրեսի «Բանբեր» դուստր ձեռնարկությունն ու գործակալության աշխատակից եւ թերթի գործադիր տնօրեն Արտյոմ Խաչատրյանը: Հետագայում թերթի անվան սկզբին ավելացավ անգլերեն «դը» մասնիկը, չափսը վերածվեց A-3 ֆորմատի, թեեւ պահպանվեց ծավալը՝ 4 տպ. մամուլը:

«Կին եւ տղամարդ» բժշկական թերթի գլխավոր խմբագիրն է ոչ թե Կարմեն, այլ՝ Կարլեն Ակունցը (էջ 29):

– էջ 32-ում տպված է. «Հայֆի» գլխավոր խմբագիր Հասմիկ Բողոսյանի...»:

Միանգամից թույլ է տրվել երկու սխալ. Հասմիկ Պողոսյանը տվյալ ժամանակաշրջանում «Հայֆի» գլխավոր խմբագրի պաշտոնակատարն էր:

– «Հեռուստաշաբաթ» թերթի հիմնադիրներ են նշվում Հայաստանի Ազգային հեռուստատեսությունն ու Ազգային ռադիոն (էջ 33): Համահիմնադիր է նաեւ շաբաթաթերթի տնօրեն եւ խմբագիր Գոռ Ղազարյանը:

– «Մոլորակ» օրաթերթի գլխավոր խմբագրի անունը Հայկազն, այլ ոչ Հայկազ Ղահրիյան է (էջ 34):

– «Թալին» թերթը հայտարարվում է «ֆաղխորհրդի օրգան» (էջ 46): Իրականում թերթը Թալինի ֆաղամթեատրանի օրգանն է:

– Նշվում է, որ Գավառ (նախկին Կամո) քաղաքում 1996 թ.-ին փակվել է շաբաթական «Աժդահակ» թերթը (էջ 54): Պետք է ավելացվեր, որ նրանից հետո փորձ է արվել ստեղծելու քաղամթեատրանի «Գավառ» պատշաբաթերթը, լույս է տեսել ընդամենը մեկ համար:

– Գեղարքունիքի մարզի նախկին շաբաթական, փակված թերթերի շարքում (էջ 54) չի հիշատակվում Կրասնոսելսկի «Արեգունի» թերթը:

– Վանաձորի «Բոլոր քար» թերթը հայտարարվում է «շաբաթաթերթ», իսկ համահիմնադիրներից մեկը՝ էդվարդ Գաբուզյանը (էջ 54): Իրականում, հիշյալ պարբերականությունը հեռու է ճշմարտությունից, իսկ համահիմնադրի ազգանունը Ղաբուզյան է:

– Վանաձորի «Եղինջ» երգիծաթերթի համահիմնադիր է նշվում «Սամսար» ՍՊԸ-ն (էջ 55), ճիշտը «Սիմսար» ՍՊԸ է:

– Վանաձորի «Եղինջ» եւ «Մշակ» պարբերականների տվյալներում սխալ «Դիզայն» համակարգչային կենտրոն ձեւով է ներկայացվում մուտքագրող ձեռնարկության անունը (էջ 55, 58), ճիշտը «Համակարգչային դիզայն» անունն է, որը անսխալ նշվել է «Ընտանիք» եւ «Լոռու մարզ» թերթերի տվյալներում (էջ 56, 57):

– Վանաձորի «Արփի» թերթը ներկայացվում է «Արփի» ու «Արփա» սխալ ձեւերով (էջ 55): Հարկավոր է այս թերթի անվան առաջին, երրորդ եւ չորրորդ տառերը գրել մեծատառերով, քանի որ անունը կազմվել է «Արդյունք, փաստ, իրադարձություն» բառերի հաղավումով:

– Թումանյանի նախկին շրջանի «Լալվար» թերթի մասին գրված է, որ 1992 թ. հիմնադրել է շրջկոմը (էջ 57): Սա ժամանակագրական սխալ է. այդ թվականին շրջկոմներն արդեն ֆաղական կյանքից դուրս էին մղված: Իրականում շրջխորհուրդն է թերթը հիմնադրել է:

– Ստեփանավանի «Երեկոյան Ստեփանավան» թերթի տպագրության վայր է նշվում Երեւանի «Պարբերական» հրատարակչության տպարանը (էջ 55): Այս տեղեկության ճշմարտացիությունը, դատելով թերթի տպագրության որակից ու չափերից, լուրջ կասկած է հարուցում:

– «Սոֆակ» թերթի գլխավոր խմբագրի անունը ոչ թե Ֆահրադ Սոլուկանյան է (էջ 58), այլ Ափուջանյան:

– Վանաձորում լույս տեսած հանդեսի անունը նշվում է «Մաշտոց» ձեւով (էջ 58): Սա կասարվել է հանդեսի հրատարակիչների մեղքով: Պարբերականը գրանցված է «Մաշտոց-Լոռվա մշակույթ» անունով եւ պարտավոր էր այդ անունը տալ իր շաբաթվի վրա, ոչինչ չառաջացնելու համար Երեւանում «Մաշտոց» անունով գրանցված ու այդ անունով էլ լույս տեսած թերթի հետ:

– Ստեփանավանի նախկին շրջխորհրդի թերթի անունը փոխվել է Թումանյանի շրջխորհրդի (հետագայում՝ Ալավերդու ֆաղամթեատրանի) թերթի անվան հետ եւ ներկայացվել «Լոռի» ձեւով (էջ 59): Ստեփանավանի թերթի անունը «Լոռե» էր:

– Շիրակի մարզպետարանի «Հյուսիսային Հայաստան» պատշաբաթերթի մասին գրված է. «Թերթը հրատարակվում է 1997 թ. հունվարից» (էջ 61): Այս անճշտությունը եւս հրատարակիչների մեղքով է կասարվել. նրանք փորձում են այս անճշտությունը մտցնել լայն շրջանառության մեջ, տալով թերթի ճակատին, ենթավերնագրի կողքին, աշխատելով ծածկել 1996 թ.-ին թույլ տրված օրենքի խախտումը: Թերթը, տակավին չգրանցված, լույս է տեսել 1996 թ.-ի սեպտեմբերին, նախագահական ընտրություններից անմիջապես առաջ, 99 օրինակ հայտարարված, իրականությունից շատ հեռու տպաքանակով, եւ ծառայել նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրարշավին. այսպիսով, միանգամից խախտվել են երկու օրենքներ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ու «ՀՀ նախագահի ընտրության մասին» օրենքները...

– Գյումրիի երեք թերթերի «Անցուդարձ Գյումրի Express»-ի, «Ավեսիա» եւ «Պոլոզ Մուկուչի» չափս է նշվում A-2 ֆորմատը (էջ 62): Երեք թերթերը բնավ այդ չափսերը չեն ունեցել, այլ հրատարակվել են A-3 ֆորմատով:

– «Անցուդարձ» թերթի անունը (էջ 62) հարկավոր է ներկայացնել լրիվ «Անցուդարձ Գյումրի Express» ձեւով:

– «Կումայրի հրատարակչություն» ՍՊԸ-ի նախագահ է հայտարարվում Կարապետ Խաչատրյանը (էջ 62): Հրատարակչության նախագահն է Հենրիկ Գեւորգյանը:

– Արթիկի «Լեռնագործ» թերթի մասին ասվում է, որ փակվել է 1966 թ.-ին (էջ 63): Հասկանալի է, որ շարադրի մեղքով թույլ է տրվել անճշտություն. ճիշտը 1996 թ.-ն է:

– Գորիսի «Տաթեւի համալսարան» ոչ պետական «Տաթեւ-91» համալսարանի թերթի համար ասվում է, որ պարբերականությունը «ամիսը 2-3 անգամ» է. իրականում պետք է լինի «տարին 2-3 անգամ», թեեւ տարեկան երբեմն նույնիսկ 1 համար է լույս տեսել:

– Գորիսի «Տաթեւ» ամսագրի (էջ 64) լրիվ անունն է՝ «Տաթեւ IX»:

– Բերդում մի ժամանակ լույս տեսած թերթի անունը ոչ թե «Այգեբաց» է եղել (էջ 66), այլ՝ «Այգաբաց»:

– «Տավուշ» թերթի մասին գրված է, որ նրա առաջին համարի լույս ընծայումը նախատեսվում էր 1997 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին (էջ 66): Իրականում, թերթի մի քանի համար լույս է տեսել 1995 թ.-ին, ապօրինաբար, Ազգային ժողովի ընտրություններից առաջ ֆաղամական պատվեր կասարելով:

– ՀՀՇ-ի Իջեւանի կազմակերպության արդեն 5 տարի դադարած «Ձայն» պատշաբաթերթի մասին գրվում է (էջ 66), բայց, սարսռելիորեն, չի գրվում կուսակցությունների շրջանային բազմաթիվ այլ պարբերականների մասին:

– «Արմա» հեռուստաստուդիայի հիմնադրի անունը նշվում է «Վախնար» կոորդինատիվ ձեւով. ճիշտն է՝ «Վահնար»:

Ըստ երեւույթին, հետազոտությունը կասարվել է ռուսերեն, իսկ հետագայում թարգմանվել հայերեն: Այս պատճառով էլ տեղ են գտել բազմաթիվ օտարաբանություններ, ինչպես «բացի այդ» (էջ 16, եւ այլն.), «Բանն այն է» (էջ 22) եւ այլն.:

Բացի վերոհիշյալ սխալներից ու բացթողումներից, տեղ են գտել շարադրի անուշադրության պատճառով թույլ տրված սխալներ, ինչպես եւ տողադարձի կանոնների խախտումներ:

Այս բոլորով հանդերձ, Հայաստանի ԶԼՄ ընկերակցության հրատարակած այս գրքույկը արժանի է ամեն գովասանքի:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼ

Մի քանի ճշգրտում

Վերջին երկու տարիներին անհամեմատ ավելացան Հայաստանի զանգվածային լրատվության միջոցներին, մասնավորապես պարբերական մամուլին նվիրված ուսումնասիրությունները: Դրանցից է անցյալ տարվա վերջին օրերին հայերեն, անգլերեն եւ ռուսերեն անջատ տարբերակներով լույս տեսած «Հայաստանի զանգվածային լրատվամիջոցները. տեխնիկական վիճակը եւ շուկայի ընդլայնման հնարավորությունները» գրքույկը (117 էջ): Այն հրատարակվել է Հայաստանի ԶԼՄ ընկերակցության կողմից: Ծրագրի ֆինանսավորումը՝ «Եվրասիա» հիմնադրամի կողմից. ծրագրի ղեկավար՝ Ասոն Մելիքյան:

Ուսումնասիրությունը, ինչ խոսք, կատարվել է բարեխղճորեն: Այն շատ կարեւոր սկզբնաղբյուր է Հայաստանի ժամանակակից մամուլն ուսումնասիրողի համար: Այստեղ, ցավոք սրտի, տեղ են գտել մի շարք սխալներ, որոնք չճշգրտված թողնելը մեծացնում է լայն տարածում ստանալու հավանականությունը: Այս մտահոգությամբ էլ ստորեւ կատարում ենք մի շարք ճշգրտումներ, որոնք հիմնականում վերաբերում են գրքույկի՝ պարբերական մամուլի վերաբերյալ բաժնի մի շարք տեղեկություններին:

ծեռնարկությունն ու գործակալության աշխատակից եւ թերթի գործադիր տնօրեն Արտյոմ Խաչատրյանը: Հետագայում թերթի անվան սկզբին ավելացավ անգլերեն «դը» մասնիկը, չափսը վերածվեց A-3 ֆորմատի, թեեւ պահպանվեց ծավալը՝ 4 տպ. մամուլը:

«Կին եւ տղամարդ» բժշկական թերթի գլխավոր խմբագիրն է ոչ թե Կարմեն, այլ՝ Կարլեն Ակունցը (էջ 29):

– էջ 32-ում տպված է. «Հայֆի» գլխավոր խմբագիր Հասմիկ Բողոսյանի...»:

Միանգամից թույլ է տրվել երկու սխալ. Հասմիկ Պողոսյանը տվյալ ժամանակաշրջանում «Հայֆի» գլխավոր խմբագրի պաշտոնակատարն էր:

– «Հեռուստաշաբաթ» թերթի հիմնադիրներ են նշվում Հայաստանի Ազգային հեռուստատեսությունն ու Ազգային ռադիոն (էջ 33): Համահիմնադիր է նաեւ շաբաթաթերթի տնօրեն եւ խմբագիր Գոռ Ղազարյանը:

– «Մոլորակ» օրաթերթի գլխավոր խմբագրի անունը Հայկազն, այլ ոչ Հայկազ Ղահրիյան է (էջ 34):

– «Թալին» թերթը հայտարարվում է «ֆաղխորհրդի օրգան» (էջ 46): Իրականում թերթը Թալինի ֆաղամթեատրանի օրգանն է:

– Նշվում է, որ Գավառ (նախկին Կամո) քաղաքում 1996 թ.-ին փակվել է շրջանային «Աժդահակ» թերթը (էջ 54): Պետք է ավելացվեր, որ նրանից հետո փորձ է արվել ստեղծելու քաղամթեատրանի «Գավառ» պատշաբաթերթը, լույս է տեսել ընդամենը մեկ համար:

– Գեղարքունիքի մարզի նախկին շրջանային, փակված թերթերի շարքում (էջ 54) չի հիշատակվում Կրասնոսելսկի «Արեգունի» թերթը:

– Վանաձորի «Բոլոր քար» թերթը հայտարարվում է «շաբաթաթերթ», իսկ համահիմնադիրներից մեկը՝ էդվարդ Գաբուզյանը (էջ 54): Իրականում, հիշյալ պարբերականությունը հեռու է ճշմարտությունից, իսկ համահիմնադրի ազգանունը Ղաբուզյան է:

– Վանաձորի «Եղինջ» երգիծաթերթի համահիմնադիր է նշվում «Սամսար» ՍՊԸ-ն (էջ 55), ճիշտը «Սիմսար» ՍՊԸ է:

– Վանաձորի «Եղինջ» եւ «Մշակ» պարբերականների տվյալներում սխալ «Դիզայն» համակարգչային կենտրոն ձեւով է ներկայացվում մուտքագրող ձեռնարկության անունը (էջ 55, 58), ճիշտը «Համակարգչային դիզայն» անունն է, որը անսխալ նշվել է «Ընտանիք» եւ «Լոռու մարզ» թերթերի տվյալներում (էջ 56, 57):

– Վանաձորի «Արփի» թերթը ներկայացվում է «Արփի» ու «Արփա» սխալ ձեւերով (էջ 55): Հարկավոր է այս թերթի անվան առաջին, երրորդ եւ չորրորդ տառերը գրել մեծատառերով, քանի որ անունը կազմվել է «Արդյունք, փաստ, իրադարձություն» բառերի հաղավումով:

– Թումանյանի նախկին շրջանի «Լալվար» թերթի մասին գրված է, որ 1992 թ. հիմնադրել է շրջկոմը (էջ 57): Սա ժամանակագրական սխալ է. այդ թվականին շրջկոմներն արդեն ֆաղական կյանքից դուրս էին մղված: Իրականում շրջխորհուրդն է թերթը հիմնադրել է:

– Ստեփանավանի «Երեկոյան Ստեփանավան» թերթի տպագրության վայր է նշվում Երեւանի «Պարբերական» հրատարակչության տպարանը (էջ 55): Այս տեղեկության ճշմարտացիությունը, դատելով թերթի տպագրության որակից ու չափերից, լուրջ կասկած է հարուցում:

– «Սոֆակ» թերթի գլխավոր խմբագրի անունը ոչ թե Ֆահրադ Սոլուկանյան է (էջ 58), այլ Ափուջանյան:

– Վանաձորում լույս տեսած հանդեսի անունը նշվում է «Մաշտոց» ձեւով (էջ 58): Սա կասարվել է հանդեսի հրատարակիչների մեղքով: Պարբերականը գրանցված է «Մաշտոց-Լոռվա մշակույթ» անունով եւ պարտավոր էր այդ անունը տալ իր շաբաթվի վրա, ոչինչ չառաջացնելու համար Երեւանում «Մաշտոց» անունով գրանցված ու այդ անունով էլ լույս տեսած թերթի հետ:

– Ստեփանավանի նախկին շրջխորհրդի թերթի անունը փոխվել է Թումանյանի շրջխորհրդի (հետագայում՝ Ալավերդու ֆաղամթեատրանի) թերթի անվան հետ եւ ներկայացվել «Լոռի» ձեւով (էջ 59): Ստեփանավանի թերթի անունը «Լոռե» էր:

– Շիրակի մարզպետարանի «Հյուսիսային Հայաստան» պատշաբաթերթի մասին գրված է. «Թերթը հրատարակվում է 1997 թ. հունվարից» (էջ 61): Այս անճշտությունը եւս հրատարակիչների մեղքով է կասարվել. նրանք փորձում են այս անճշտությունը մտցնել լայն շրջանառության մեջ, տալով թերթի ճակատին, ենթավերնագրի կողքին, աշխատելով ծածկել 1996 թ.-ին թույլ տրված օրենքի խախտումը: Թերթը, տակավին չգրանցված, լույս է տեսել 1996 թ.-ի սեպտեմբերին, նախագահական ընտրություններից անմիջապես առաջ, 99 օրինակ հայտարարված, իրականությունից շատ հեռու տպաքանակով, եւ ծառայել նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրարշավին. այսպիսով, միանգամից խախտվել են երկու օրենքներ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ու «ՀՀ նախագահի ընտրության մասին» օրենքները...

– Գյումրիի երեք թերթերի «Անցուդարձ Գյումրի Express»-ի, «Ավեսիա» եւ «Պոլոզ Մուկուչի» չափս է նշվում A-2 ֆորմատը (էջ 62): Երեք թերթերը բնավ այդ չափսերը չեն ունեցել, այլ հրատարակվել են A-3 ֆորմատով:

– «Անցուդարձ» թերթի անունը (էջ 62) հարկավոր է ներկայացնել լրիվ «Անցուդարձ Գյումրի Express» ձեւով:

– «Կումայրի հրատարակչություն» ՍՊԸ-ի նախագահ է հայտարարվում Կարապետ Խաչատրյանը (էջ 62): Հրատարակչության նախագահն է

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՄՈՒԼ

Քլինթոնը մի անգամ էլ ապացուցեց, որ հայերի բարեկամը չէ

Մարտի 5-ի «Արմինյան Միրոր Սփեմբեյթըր» շաբաթաթերթում Հարութ Սասունյանը գրում է Քլինթոնի թուրքամետ քաղաքականության մասին:

Նախագահ Քլինթոնը հենց նոր մի նամակ է հղել, որը դարձյալ վիրավորում է աշխարհասփյուռ հայերի ինքնասիրությունը: Երեւի թե մենք հարկադրված ենք հանդուրժել արդեն քանիերորդ անգամ կրկնվող թուրքամետ արտահայտությունները մինչեւ նրա հեռանալը զբաղեցրած պաշտոնից: Իսկ առավել վրդովեցուցիչը ամերիկահայերի անտարբեր վերաբերմունքն է այդ արտահայտությունների նկատմամբ: Ընդունելով հանդերձ, որ մենք գոհ չենք Քլինթոնի վարչակարգից, ոչ ամերիկահայ համայնքը, ոչ էլ հայկական կառավարությունը բավականին վճռական կեցվածք ցարդ չեն որդեգրել Սոֆիական տան եւ պետքարտուղարության հանդեպ: Դժբախտաբար մեր դասի կիսատրացավ պատշաբանության մեջ մենք միայն մեզ կարող ենք մեղադրել: Ռեյգանի եւ Բուշի նախագահությունների ժամանակ հանրապետական հայերը պատշաճ ուշադրություն չդարձրին ցեղասպանության նկատմամբ հանրապետական վարչակարգի որդեգրած դիրքորոշմանը, հայկականությունից ավելի բարձր դասելով իրենց նվիրվածությունը հանրապետական կուսակցությանը: Այժմ էլ դեմոկրատական հայերն են կուրորեն պաշտպանում Քլինթոնի վարչակարգը՝ հակառակ հայկական դասի հանդեպ ցուցաբերած նրա բացահայտ թշնամությանը: Ամերիկայի Հայ ազգային խորհրդին ուղղված 1997 թ. դեկտեմբերի 9-ի նամակում Ազգային անվտանգության խորհրդատու Սենդի Բերգերը շարունակում էր հայկական ցեղասպանությանը մոտենալ որպես ոչ ավելի, քան «կոտորածների եւ տեղահանությունների»: Ես կասկածում եմ, որ մեկ միլիոնի հասնող ամերիկահայերից տասը հոգի անգամ հարկ չհամարեց պատասխան նամակ գրել եւ դատապարտել Սոֆիական տան նման կեցվածքը: Վերջին երեք տարիների ընթացքում ապրիլի 24-ի նախօրյակներին Սոֆիական տունը հայտարարություններ է հրապարակում, որոնցում իրադարձությունը որակվում է «ողբերգականից» սկսած մինչեւ «պատմության սեւ էջ», բայց երբեք ըստ ամենայնի՝ «ցեղասպանություն»: Եվ մենք անամոթաբար այդ ցնդաբանությունները կարդում ենք մեր հիշատակի երեկոներում, փոխանակ աղբարկղը գցելու:

Ես արդեն հոգնել եմ տարեցտարի նախագահական այս կիսաճշմարտություններ դատապարտող միակ անձը լինելուց: Մեզ անհրաժեշտ է մի խնդրագիր ներկայացնել ասելով. «Պարոն նախագահ, եթե դուք համառորեն խուսափելու եք ցեղասպանություն բառը օգտագործելուց, բարի եղեք ընդհանրապես հայտարարություն չհրապարակել եւ չվիրավորել մեզ»:

Վերջին մեկուկես տարում, ամերիկահայ 13 գլխավոր կազմակերպություններ միասնաբար երեք նամակ են հղել նախագահ Քլինթոնին, դատապարտելով նրա ադրբեջանամետ դիրքորոշումը Ղարաբաղի հարցում: Երեք նամակներում էլ այդ կազմակերպությունները ցանկություն էին հայտնել հանդիպել նախագահի հետ: Նա ընդհանրապես արհամարհեց 1996 թ. հուլիսի 26-ի նամակը: 1997-ի հունվարի 7-ի նամակից հետո հայերին ընդունեց Ազգային անվտանգության խորհրդատուն: Իսկ երրորդ նամակից (գրված 1997-ի դեկտեմբերի 15-ին) արդեն երեք ամիս է անցել եւ Սոֆիական տունը ոչ միայն նման հանդիպում դեռ չի նշանակել, այլ ընդհանրապես չի էլ հաստատել նամակի ընդունումը:

Ես առաջարկում եմ մեր առաջնորդներին այսուհետեւ չհամաձայնել հանդիպել նախագահի տեղակալներից որեւէ մեկի հետ: Նրանք պետք է նաեւ հանդիպում չխնդրեն նախագահից: Մինչեւ հիմա պարզ պետք է լինի մեզ համար, որ Քլինթոնը ոչ մի մտադրություն կամ շահագրգռություն չունի լսելու ամերիկահայերի մտահոգությունները: Նա իրեն հետաքրքրող այլ խնդիրներ ունի:

Ցավալի է, բայց փաստ, որ վերոհիշյալ երեք նամակներից եւ ոչ մեկում չի ակնարկվում, որ Ղարաբաղի հարցի վերաբերյալ նախագահի դիրքորոշումը անընդունելի է հայերի համար: Սա կարող է այնպես մեկնաբանվել, որ իբր Սոֆիական տունը լավություն է անում հայերին՝ հրապարակելով ապրիլի 24-ի հերթական վիրավորական հայտարարությունները:

Քլինթոնի թուրքամետ դիրքորոշման ամենավերջին օրինակը նրա պատասխան նամակն է (1998 թ. փետրվարի 6-ին գրված) անցյալ դեկտեմբերի 18-ին Կոնգրեսի 23 անդամների նրան հղած նամակի, որում նրանք գանգատվում էին «Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված Թուրքիայի բռնամական եւ սխալական քաղաքականությունից»: Նրանք Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը համարել են «խախտում ամերիկյան օրենքների, մարդու իրավունքների եւ մարդասիրական միջազգային օրենքների, ՆԱՏՕ-ի կանոնադրության եւ ԵԱՀԿ պարտավորվածությունների, որի տակ ստորագրել է նաեւ Թուրքիան»:

Իր պատասխան նամակում Քլինթոնը անամոթաբար արդարացնում է թուրքական շրջափակումը: «Ինչպես գիտեք, Թուրքիան Հայաստանի հետ իր սահմանը բաց է պահել մինչեւ 1993 թվականը, երբ հայկական ուժերը հարձակվեցին եւ գրավեցին Քելբաջարը արեւմտյան Ադրբեջանում: Թուրքիան փակեց իր սահմանը բողոքելու համար այդ հարձակման դեմ եւ պատրաստ է բացելու, եթե կողմերը կարողանան Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ համաձայնության գալ», գրում է նա եւ ավելացնում, որ Վրաստանի վրայով Հայաստան հասնող նավային առաքումների մեծամասնությունը «տեղ է հասնում թուրքական նեղուցներով թուրքական կառավարության եւ իշխանությունների ակտիվ համագործակցությամբ»:

Սա ամբողջովին մոլորեցնող արտահայտություն է, քանի որ, վստահ եմ, նախագահի մասնագետ-խորհրդատուները քաջատեղյակ են, որ 1936 թվի նեղուցների մասին Մոնտրոյի համաձայնագրով «ամբողջական ազատություն է տրված բոլոր նավերին՝ անկախ դրոշից կամ բեռների տեսակից, անցնելու այդ նեղուցներով»:

Այնպես որ սխալ է պնդել, թե Թուրքիան ակտիվորեն համագործակցում է այդ հարցում: Եթե նա իրոք շահագրգռված լիներ մարդասիրական օգնություններ Հայաստան հասնելու խնդրով, մինչեւ հիմա բաց արած կլիներ Հայաստանի հետ իր սահմանը:

Վերը նշվածներից հստակ է, ուրեմն, որ նախագահ Քլինթոնը Հայաստանի կամ հայերի բարեկամը չէ: Ընդհակառակը, նա իրեն հռչակել է Թուրքիայի եւ Ադրբեջանի խոսնակը: Այնպես որ եկեք մեր բողոքի ձայնը բարձրացնենք եւ հորդորենք Հայաստանի հաջորդ նախագահին նույնը անելու: Պետք չէ վախենալ, որ նման քայլի դեպքում նա Հայաստանին կզրկի ֆինանսական ժանդակություններից: Այդ օժանդակությունների հարցը որոշողը ոչ թե Սոֆիական տունն է, այլ Կոնգրեսը: Փառք Աստծո, մենք բավական ընկերներ ունենք ամերիկյան Կոնգրեսում:

Եթե Հայաստանի եւ Ղարաբաղի գոյատեւումը կախված լիներ Քլինթոնի վարչակարգի օժանդակություններից, երկուսն էլ վաղուց անհետացած կլինեին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ

Վաշինգտոնի բիզնես-դիվանագիտությունը

«Սառը պատերազմն ավարտված է, կեցցե «սառը պատերազմը»: Վաշինգտոնի համար 90-ական թթ. առեւտրային հաղթականությունը նույն կարեւորությունն ունի, ինչ 80-ական թթ. սպառազինությունների սահմանափակման բանակցությունները: Այսպես, ճապոնական ընտանիքներին ամերիկյան բրինձ վաճառելը առաջին հայացքից այնքան էլ տպավորիչ չէ, որքան Նյու Յորքի վրա ուղղված հրթիռների աղմոնցաժումը: Սակայն երկու դեպքերում էլ ամերիկյան պետությունն իր հզորությունն օգտագործում է սեփական շահերը պաշտպանելու համար: ԱՄՆ-ի վարչակազմը առեւտրային աննախադեպ գործունեություն է ծավալել ամերիկյան արտադրանքի առջեւ օտար շուկաները բացելու նպատակով: «Նախագահ Քլինթոնը թերեւս ավելի շաս ժամանակ է հատկացնում ամերիկյան ապրանքների գովազդմանը, քան իր արտաքին քաղաքականության մյուս բոլոր կողմերին», գրում է Հարվարդի համալսարանի քաղաքագետ Սեմյուել Հանթինգտոնը «Ֆորին աֆերզ» հանդեսում: Օրինակ, Քլինթոնը նամակ էր գրել Սաուդյան Արաբիայի Ֆահդ թագավորին, գովերգելով AT&T ամերիկյան կապի համակարգի առավելությունները, իսկ Ղազախստանի նախագահ Նազարբաեւին գրած նամակում պաշտպանել էր «Շեւրոն» նավթային ընկերության շահերը:

ԳՖՀ-ի կանցլեր Քոլը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը եւս հաճախ առեւտրային ներկայացուցչի դերում են հագնում արտասահմանյան ուղեւորությունների ժամանակ: Բայց ամերիկացիները շաս ավելի հեռուն են գնում: Լատինական Ամերիկայում, Ասիայում եւ Եվրոպայում հետզհետ ավելի ու ավելի բարձրաձայն են մեղադրում ամերիկացիներին, որոնք ուզում են իրենց պայմանները թելադրել ողջ մոլորակին: Հելմս-Բարթոնի օրենքը միջազգային բեռնարգելք է նախատեսում Կուբայի նկատմամբ, իսկ դ'Ամատոյի օրենքը պատժամիջոցներով սպառնում է օտարերկրյա այն ընկերություններին, որոնք ներդրումներ են կատարում Իրանի կամ Լիբիայի նավթարդյունաբերության մեջ: Հաճախ ղեկավարվելով ներքին քաղաքականության նպատակներով, այդ տեսքերի հեղինակները հավակնում են դրանք կիրառել թե ամերիկյան եւ թե օտարերկրյա բոլոր ձեռնարկությունների նկատմամբ:

Որոշ երկրների հետ կատարվող առեւտրում սեփական օրենքների պարտադրումը երբեմն վնասում է հենց ԱՄՆ-ի շահերին: Ինչպես նշում է «Էքսպրես» հանդեսը, վերջին 4 տարում 60-ից ավելի օրենսդրական ակտեր եւ նախագահական հրամանագրեր են հրապարակվել 35 երկրների հետ առեւտրական փոխանակումները սահմանափակելու նպատակով: Այդ պատժամիջոցները վերաբերում են Չինաստանին (մարդու իրավունքների պատճառով), Թայվանին (շրջակա միջավայրի պատճառով), Կոլումբիային (թմրադեղերի պատճառով), Իրանին, Իրաքին, Լիբիային, Սիրիային, Հյուսիսային Կորեային (ահաբեկչության մեղադրանքով), Կուբային (որը մեղադրվում է ...կաստրոյականության մեջ): Այդ պատժամիջոցների հետեւանքով ամերիկյան «Կոնոկո» նավթային ընկերությունը ափսոսանքով ստիպված եղավ չեղյալ հայտարարել Իրանի գազի ու նավթի հանքավայրերի շահագործմանն առնչվող 1 մլրդ դոլարանոց պայմանագիրը: Իսկ ամերիկացի միջուկագետները պայրացած դիտում են, թե մրցակից Ֆրանսիացիներն ինչպես են մուտք գործում Չինաստանում ատոմակայանների կառուցման բնագավառ, ուր իրենց մուտքն արգելված է Կոնգրեսի կողմից: Լուրեր են պտտվում, թե ներկայումս ներքին բուռն վեճեր են ծավալվել ԱՄՆ-ի առեւտրի դեպարտամենտում, որտեղ մշտապես հետեւում են բանակցությունների առարկա դարձած մոտ 100 խոշորագույն պայմանագրերին:

Պ. Ք.

ԲԱՔՈՒ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Իբրահիմ Մամեդլին հաղորդում է, որ Ռասուլ Գուլիեւը պատասխան ստանալով ԱՄՆ-ի փոխնախագահ Գորից, մտադիր է դրանից օգտվել քաղաքական խուսափումներն ընդլայնելու համար: Թղթակցի կարծիքով, Գորը կարող էր Գուլիեւի ուշադրությունը հրավիրել ոչ միայն նրանով, որ հավանաբար կարեւոր դեր կխաղա Ամերիկայի ապագա քաղաքականության մեջ, այլեւ Ռուսաստանի վարչապետ Չեռնոմիրդինի հետ ունեցած սերտ կապերով: Քլինթոնից հետո նախագահ դառնալու Գորի, Ելցինից հետո Չեռնոմիրդինի, Ալիեւից հետո Գուլիեւի ցանկությունները կարեւոր գործոն են քաղաքական ուժեղ դաշինք ստեղծելու համար: Բացի այդ, Չեռնոմիրդինին օգնելու ԱՊՀ-ում լայն կապեր ու ֆինանսական լծակներ ունեցող Գուլիեւի հնարավորությունները բնավ էլ չեն հավասարեցվում զրոյի: Մոտենում է ժամանակը, երբ նա քաղաքական կապեր կհաստատի երկու խոշոր դեմքերի հետ, որոնք զգալի հնարավորություններ ունեն ազդելու Ադրբեջանի քաղաքական գործընթացների վրա:

ԱԴՐԲԵՋԱՆ

Գուլիեւը հույսեր է կապում Գոր-Չեռնոմիրդին երկյակի հետ

Գուլիեւն իր նամակով, կամա թե ակամա, ներքին ժողովրդավարական ընդդիմության համար գործելու նոր հնարավորություններ ստեղծեց: Ամերիկյան Կոնգրեսը ամենից ավելի է դժգոհ Ադրբեջանում ժողովրդավարության զարգացումից եւ մարդու իրավունքների հետ կապված վիճակից: Այդ ուղղությամբ եռանդուն գործունեություն ծավալելու համար Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու հարցում: Հնարավոր է, որ դրա հետ են կապված հանրապետությունում մարդու իրավունքները պաշտպանելու սասրս Ադրբեջանի կառավարության վերջին ակտիվ ցուցումները դատախազությանը, պետմարմիններին, ներքգործնախարարությանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Լեբեդը հետաքրքրում է հեռուստատեսությանը

Ռուսաստանի հեռուստաընկերություններն սկսել են ավելի մեծ հետաքրքրություն հանդես բերել գեներալ Ալեքսանդր Լեբեդի հանդեպ, որի թեկնածությունը վերջերս առաջադրվել է Կրասնոյարսկի նահանգապետի պաշտոնի համար: 1996 թ. նախագահական ընտրություններում Լեբեդն ստացել էր ընտրողների քվեների 14 տոկոսը: Նահանգային ընտրություններում նրա հաղթանակը գրեթե կասկած չի հարուցում այն պատճառով, որ Ալեքսանդր Լեբեդի եղբայրը Կրասնոյարսկի նահանգին սահմանակից Խակասիայի ղեկավարն է, իշխում է տեղական բիզնեսում եւ ամեն ջանք գործադրում է նրան աջակցելու համար:

«ԷՔՍՊՐԵՍ»

Դաղստանում դաժանորեն ծեծվել է ՕՊՏ-ի աշխատակիցը

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Երկուշաբթի օրը ժամը մոտավորապես 18-ին Մախաչկալայի կենտրոնում դաժան ծեծուջարդի է ենթարկվել Ռուսաստանի հասարակական հեռուստատեսության արտահասքիային թղթակից, «Մ-5» տեղական հեռուստաալիքի օպերատոր Թիմուր Կուկուեւը: Ծեծելով լրագրողին, սահակները նրան ուղղակի հայտարարել են, որ նա «ուրիշի տարածքում չնկարահանի ինչ-որ չի կարելի եւ այսուհետեւ ավելի խելացի լինի»: Կուկուեւը հանրապետական հիվանդանոցի նյարդավիրաբուժության բաժանմունք է տեղափոխվել ջարդված մի քանի կողոսկրերով, այլանդակված դեմքով եւ ուղեղի ցնցումով:

Մեծ Բրիտանիայի կառավարությունը ծրագրում է ապաքեղականացնել Բի Բի Սի կորպորացիան

ԼՈՆԴՈՆ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծ Բրիտանիայի կառավարությունը քննարկում է Բի Բի Սի ռադիոհեռուստատեսային կորպորացիան լիովին ապաքեղականացնելու, նրա պետական ֆինանսավորումը դադարեցնելու եւ կորպորացիայի գործունեությունը բաժնետերերի վերահսկողության սերտ փոխադրելու հարցը: Նախատեսվում է, որ բարենորոգման ողջ գործընթացը կտեւի մոտ երկու տարի:

Ինչպես հաղորդել է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, նախնական գնահատումներով, Բի Բի Սիի լիակատար սեփականաշնորհումը կվերացնի նրա բյուջետային ֆինանսավորման անհրաժեշտությունը, որը տարեկան հասնում է շուրջ 250 միլիոն ֆունտ ստեռլինգի: Նման քայլը նաեւ հնարավորություն կտա հոգալու, որ կորպորացիան միջազգային հիմնադրամային բուկա դուրս գա սեփական արժեթղթերով:

Այսօրվա դրությամբ ընկերության ունեցվածքները, հաշվի առնելով 21 միլիոն բաժանորդներից ստացվող հասույթները, գնահատվում են գրեթե 4 միլիարդ ֆունտ ստեռլինգ:

Քոնությունը մերժող քաղաքական գործիչը

Կես դար առաջ սպանվեց Մահաթմա Գանդին, մարդ, որը խաղաղ պայքարը վերածեց քաղաքական ծրագրի

Ուինսթոն Չերչիլն արհամարհաբար նրան «մերկ ֆակիր» էր անվանում, իսկ Ալբերտ Էյնշտեյնը, Գանդիով հիանալով, ասում էր. «Հետագա սերունդները դժվար թե հավատան, որ սովորական միս ու արյունից կազմված այդպիսի մարդ կար աշխարհի վրա»: Հնդկաստանում նրան «ազգի հայր» էին անվանում, թեեւ որոշ արմատականներ Գանդիին «Հնդկաստանի դավաճան» էին խարանել:

Պատմության մեջ որպես Մահաթմա (մեծ հոգի) մտած Մոհանդաս Կարամչանդա Գանդիի սպանությանը հետեւած 50 տարիների ընթացքում նրա անվան շուրջ չի դադարում վեճը՝ քաղաքականության մեջ մտած հինդուս սո՞ւրբ էր նա, թե՞ սրբի կերպար ընտրած խելացի քաղաքական գործիչ: Այսօր ավելի շաս վիճում են այլ հարցի առիթով՝ ի՞նչ թողեց իրենից հետո Մահաթմա Գանդին:

Հոբելյանի պատմությունը սկսվեց 2 տարի առաջ, երբ Մահաթմայի թոռ Տուշար Գանդին հայտարարեց, որ Օրիսսեի նահանգում գտնվող Հնդկաստանի պետական բանկի չիրկիզվող պահարանում պահվում է «ժողովրդի հոր» ածուխասափորը: Գանդիի կտակի համաձայն, իր մարմինը պետք է այրվեր հնդկական սովորությամբ, ապա շաղ տրվեր Հնդկաստանի գետերով: Տուշար Գանդիի պնդմամբ, Դելիում Մահաթմայի մարմինն այրելուց հետո ածուխասափորն ուղեւորվում է Օրիսսեի, ապա ուղղակի մոռացվում բանկի սեյֆում: Տուշար Գանդիի հայտարարությունից հետո անմիջապես իրարանցում է առաջանում, նահանգի իշխանությունները հայտարարում են, որ «Այսեղ պահվում է Մահաթմա Գանդիի մոխիրը» գրությամբ տուփը կեղծված է: Բանը հասնում է Գերագույն դատարան, որը հավատում է ածյունի իսկությունը:

1997-ի հունվարի 30-ին, Գանդիի մահվան 49-րդ տարեդարձի օրը, մոխիրը շաղ տրվեց սուրբ գետերի Գանգեսի եւ Ջամնայի ջրերի խառնվելու վայրում: Սակայն Մահաթմայի բարեկամներին հիասթափություն էր սպասում՝ գրեթե միլիարդանոց բնակչությամբ երկրում արարողությունը հրապուրեց հազիվ 5 հազար հանդիսականի, «ժողովրդի հորը» հրաժեշտ տալու չէին եկել ոչ երկրի ղեկավարները, ոչ էլ հնդկական ազգային կոնգրեսի ղեկավարները:

Հնդկաստանում Մահաթմայի դիմանկարները փակցված են ամենուր, նրա անունը հաճախ է օգտագործվում քաղաքական պայքարում, նրա ասածներն են մեջբերում զանգվածային քարոզարշավների ընթացքում՝ «գանդիզմ» անվանելով ուսմունքն ամբողջությամբ: Ինքը Գանդին, դեմ էր «գանդիզմ» տերմինին. ասում էր, որ ոչինչ չի հորինել, ուղղակի հանրագումարի է բերել հնդկական հասարակական միտքը: Իսկապես, ոչ բոնի հակամարտության գաղափարները Հնդկաստանում եղել են նաեւ մինչ այդ, եւ ոչ միայն Հնդկաստանում. դրա գաղափարակիրներ են եղել քրիստոնյա եւ բուդդիստ բազմաթիվ փիլիսոփաներ: Սակայն Գանդին առաջինն էր, որ դա վերածեց քաղաքական ծրագրի եւ հաղթեց: Հնդկաստանի հաջողությունը ոգեշնչեց շատերին: Գանդիի մեթոդներն ու լոզունգները օգտագործեցին Մարթին Լյութեր Քինգը, ինչպես նաեւ 1968-ի ուսանողական հեղափոխության բազմաթիվ ղեկավարներ: Այդ քաղաքականությունը փորձեցին որդեգրել նաեւ «Պրահայի գարնան» մասնակիցները: Քաղաքական պայքարում գանդիզմի հաջողված փորձերով կիրառություններից կարելի է համարել Ֆիլիպինոներում Ֆերնանդո Մարկոսի վարչակարգի տապալումը: Մարկոսի հրամանով սպանված ընդդիմադիր ղեկավար Բենիգնո Ակինոյի այրին՝ Կորազոն Ակինոն չփորձեց վրեժխնդիր լինել դիկտատորին զինված պայքարով. իր զինակիցներին նա կոչ էր անում կիրառել պայքարի խաղաղ, գանդիական մեթոդները: Մարկոսի հրամանով օգնության եկած բանակը չկրակեց անզեն մարդկանց վրա: Միջազգային հանրությունը պաշտպանեց Ակինոյին, երկրում փոքր հեղինակություն ունեցող բռնապետը ստիպված էր փախնել Ֆիլիպիններից:

Գանդիի մեթոդները իրագործելի են միայն այն հասարակություններում, որտեղ առնվազն դեմոկրատիայի եւ խոսքի ազատության սաղմեր կան: «Փորձեր Գանդին ելույթ ունենալ Սալիսբերիի օրոք՝ ընդդեմ խորհրդային կայսրության, անկասկած կկորչեր ինչ-որ տեղ ԳՈՒԼԱԳ-ում», նշել է հնդիկ մի գործիչ: Գանդիզմը հաղթում է միայն այն ռեժիմներում, որոնք ի սկզբանե պատրաստ են պարտվել:

«ԻՏՈԳԻ»

Վատիկանը ներողություն խնդրեց հրեաներից

16 ՄԱՐՏ, ԲԲՇ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Վատիկանը Հռոմի կաթոլիկ եկեղեցու անունից այսօր ներողություն խնդրեց հրեաներից, որ կաթոլիկ եկեղեցին հանդես չի եկել Հոլոքոստի դեմ, երբ երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստները ոչնչացրին շուրջ 6 մլն հրեաների: 10 էջանոց փաստաթղթում հարց է բարձրացվում հրեաների հետաքրքրումներին ցուցաբերած հնարավոր օժանդակության մասին՝ որոշ քրիստոնյաների հակասեմիտական հայտարարությունների հետեւանքով: Փաստաթղթում չի քննադատվում այն ժամանակվա Հռոմի պապը: Իսրայելի հոգեւոր առաջնորդը այսօր դժգոհություն է հայտնել, որ եկեղեցին պետք է առաջին հերթին ներողություն խնդրի այն ժամանակվա Հռոմի պապի «ամոթալի վարքագծի համար»: Ռաբին կարծիքով, եթե ժամանակին Վատիկանը ողջ ուժով բարձրացներ իր բողոքի ձայնը, այդ ահավոր իրադարձությունները հնարավոր կլինեին կանխել:

«Նատիվը» այլեւս չի լրտեսի ԱՊՀ-ում

ԹԵԼ ԱՎԻՎ, 17 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՊՀ-ում հրեության հետ կապերի կառավարական բյուրոն՝ «Նատիվը», կդադարեցնի գաղտնի տեղեկությունների հավաքումը այդ երկրներում եւ իր ջանքերը կկենտրոնացնի Համագործակցության պետություններից հրեաների Իսրայել ներգաղթը խրախուսելու վրա: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, այդ մասին Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն հայտարարել է հատուկ ծառայությունների գործունեության վերահսկման խորհրդարանական ենթահանձնաժողովի նիստում: Մեծապես «Նատիվի» ջանքերի շնորհիվ 1988 թվականից Իսրայել են ներգաղթել շուրջ 800 հազար հրեաներ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից: Դրա հետեւանքով այսօր ամեն վեց իսրայելացուց մեկը «ռուսախոս է»:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Շուրջ երկուսուկես տարի առաջ գրված մի հոդվածի ձեռագիրը մի շարք խմբագրությունների դռներ թակելուց եւ մերժվելուց հետո սիրտս եղա գզրոցը նետել եւ մոռացա դրա մասին: Այն հրաժարվեցին տպագրել անգամ ամենաընդդիմադիր համարվող թերթերը (դաշնակցության մամուլն արդեն փակված էր): Ժամանակներն ինձ մեղադրում էին մեր մշավորականության վաստակը չգնահատելու, նրա վրա կեղտ ու մուր լցնելու, ազգամիջյան թշնամանք հրահրելու (հայերի ու թուրքերի միջեւ) եւ այլ մահացու մեղքերի մեջ: Խմբագիրներին հակառակ սարսափեցնում էր անունների թվարկումը, ուր վերջիններից չէր նաեւ տխրահամբավ Հրանտ Մաթեւոսյանի անունը: Եվ հիմա, ծանոթանալով այսօրվա մամուլի վերջին հրապարակումներին, ավելի ու ավելի շատ ափսոսանք եմ զգում, որ ժամանակին չտպագրվեց այդ նյութը: Մասնավորապես, նոր խոհերի առիթ տվեցին բանաստեղծուհի Անահիտ Պարսամյանի «...Թագավորը ոչ միայն մերկ է, այլեւ վրեժխնդիր ու ոխակալ...» հրապարակումը («Իրավունք», N 6, 1998 թ.) եւ ի պատասխան դրա գրված ոմն Ս. Վիրաբի «Պասիվ ընթերցողին» հոդվածը («Ազգ», 24 փետրվար, 1998 թ.), ինչպես նաեւ երաժշտագետ Թամար Հովհաննիսյանի «Մշավորականը չի լռում, մշավորականին կարելի է լռեցնել» («Ազգ», 25 փետրվար, 1998 թ.) ծավալուն հոդվածը:

Տարիներ առաջ («Գոլոս Արմենիի», 1995 թ.), չհամաձայնելով արժանահիշատակ Հ. Օրբելու վերլուծությանը, առիթ եմ ունեցել գրելու այն մասին, որ պետք չէ «ֆիլլեսյան գաղափար», այն է՝ խոցելի տեղ փնտրել Սասունցի Դավթի մարմնի վրա, քանի որ այն պարզապես գոյություն չունի: Նրա ֆիլլեսյան գաղափարը սեփական սերմն է, հայի զարմից ծնված այն ամբողջական հերոսի ժառանգը, որը դարանակալ հարձակում է նրան թիկունքից (էպոսում բառացի՝ «...էս իմ սերմն էր, որ ինձ սպանեց...»): Այսինքն՝ օտարը չէր կարող սպանել: Պատահակա՞ն է արդյոք այս ահռելի ընդհանրացումը «Սասնա ծռեր» դյուցազնավեպում: Անշուշտ, ո՛չ: Հայ մշավորականներից ոմանց խորհուրդ կտայի վերընթերցել այդ հատվածը. թերեւս ճանաչեն իրենք իրենց:

Հայ լինելը ծանրագույն բեռ է եղել բոլոր ժամանակներում: Եվ պատահական չէ, որ ժամանակ առ ժամանակ, պատմության շրջադարձային ու աբխարհասասան պահերին մեր ժողովրդի մի սվար հատված, «հոգնելով» հայ լինելուց եւ խռովելով սեփական ճակատագրից՝ հրաժարվում է կրել այդ «խաչը» եւ կեսճանապարհին նետում է այն: Ո՞վ, եթե ոչ հայ գրողը, պետք է օգնի նրան կրելու այդ խաչը: Ո՞վ, եթե ոչ հայ գրողը, պետք է իր ողջ մարմնով փակի աբխարհաքաղաքացիության ամենակուլ հրեշի ճանապարհը, որն սպառնում է ոչնչացնել ոչ միայն մեր «վսիս» ազգին: Ո՞վ, եթե ոչ հայ գրողը, պետք է բոներ չափը կորցրած նախագահի ձեռքը՝ արգելելու նրան անել այն, ինչ նա արեց (թվարկելն անիմաստ է, էջը կլցնի): Ո՞վ պետք է սաստեր իր առաջին ու ճաշակին: Սակայն երբվանի՞ց են ստորաբերությունն ու ընչաքաղցությունը ազգի դավաճանության հետ հասարակ մարդկային թուլություններ համարվել, եւ այդ ե՞րբ է ժամանակը «սրբագրելով», ուրացողի խարանը ջնջել մարդու ճակատից:

Եթե հանրապետության համար առաջին (կամ այդպիսին համարվող) գրողը, երգահանը, նկարիչը, գիտությունների ակադեմիայի նախագահը, որոնց ձայնակցում էին օպերային թատրոնի տնօրենն ու առաջին կոլորատուրային սոպրանոն, ամեն ինչ արեցին մեր վզին մի խայտառակ սահմանադրություն եւ մի ավելի քան մերժելի նախագահ փաթաթելու համար (քանի որ սահմանադրության տապալվելու դեպքում նախագահը հրաժարական էր տալու), ապա ի՞նչ կարծիք կարելի է կազմել մեր մշավորականության մասին: Եթե հանրապետության առաջին «գյուղագիրը» լռում է՝ այդ նույն գյուղերի անուշ կանգներ, բացի մի... հրեայից (թող լույս իջնի նրա շիրիմին, որտեղ էլ որ լինի այն): Ահա՛ հայ մշավորականի իրական դեմքը:

Որտե՞ղ են հիմա գիտական կոմունիզմի այդ եռանդուն պաշտպանները: Ինչո՞ւ են լռում՝ «համաշխարհային իմպերիալիզմի» սանձազերծած այս նորօրյա խաչակրաց արշավանքին ի տես: Համոզված եմ, բոլորն էլ վաղուց նոր դերակատարություն են սանձնել: Եվ ի՞նչ դաստ պետք է տան նրանք իրենց ուսանողներին, եթե ոչ պատեհապաշտության, եւ դրանով իսկ կերտեն վաղվա մշավորականին՝ ըստ իրենց պատկերի եւ նմանության: Ահա՛ թե որն է նրանց անմահության գաղտնիքը: Եվ եթե երբեմն եղել ու լինում են բացառություններ, ապա ոչ ի շնորհիվ, այլ ի հեռուկս նրանց: Սակայն, ավա՜ղ, դրանք ընդամենը լույսի հատուկենտ շողեր են խավարի թագավորության մեջ...

ԳՈՏԱՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Դրանք ընդամենը լույսի շողեր են խավարի թագավորության մեջ

«Էս իմ սերմն էր, որ ինձ սպանեց»

Խավարի թագավորության եւ այդ թագավորությունը խավարից փրկողների մասին

Քանզի «ամենաընդդիմադիր համարվող» թերթերի շարքում «Ազգ»-ի խմբագրությանն ամենեւին էլ «սարսափեցնող» չթվաց «անունների թվարկումը, ուր վերջիններից չէր Հրանտ Մաթեւոսյանի անունը», ընթերցողին ներկայացրինք Գ. Նիկողոսյանի վերը շարադրած հոդվածը:

Այն, որ հեղինակը «զարմանում է», թե իրեն ժամանակին «զարմանալիորեն մեղադրում էին մեր մշավորականության վաստակը չգնահատելու, նրա վրա կեղտ ու մուր լցնելու» մեջ, իրոպես, զարմանալի է, զի, ակնբախ է, որ նրա այս հոդվածը նույնպես գրված է վերջին տասը տարիների մեր «ժողովրդավարական» երկրում եռանդուն կերպով ծավալած հակամշավորական պրոպագանդայի «լավագույն ավանդույթներով»:

Հասկանալի է նաեւ, որ մտքի եւ հոգու բավականաչափ լարում պահանջող նման «սրբագան» գործին զինվորագրվելով, կարելի է...

Այո, շատ բան կարելի է մեր այս խառնակ օրերում. նպատակն արդարացնում է միջոցները, ուստի եւ ինչո՞ւ խորշել դրանցից, անկախ նրանից, թե դրանք ինչպիսին են:

Կարելի է, օրինակ «չհամաձայնել» ակադեմիկոս Հ. Օրբելու հետ հայկական էպոսի վերլուծության հարցում:

Կարելի է մեղանչելով իրականության դեմ միանձնյա անվարան մեղադրանք-վճիռ կայացնել այն մասին, որ մեր ժողովրդի համար «իրոք այս տասը տարում եւ ոչ մեկի բերանից չլսվեց «Կոչեմ աղրողացը»:

Կարելի է պատմական մատերիալիզմի եւ գիտական կոմունիզմի դասագրքերը ճնշադատողի սեփական արձանը՝ պատվանդանին, իսկ ողջ հայ ժողովուրդը՝ ոչխարների հոտին հարիր ստորին տարածքներում «տեղավորելով», կոչնել նրան «ուղեկորույս եւ ուղեմոլոր» պիտակները, բարեհաճելով, համենայն դեպս, տալու խորհուրդներ «հայ մշավորականներից ոմանց», առանց որի նրանք, անտարակույս, եւ վերջնականապես «կհոգնեն հայ լինելուց»:

Կարելի է որպես մի ողջ «մայրենի բուհին» հակակշիռ կարգել «մի... հրեայի», որի «շիրիմն արժանի է նրա վրա լույս իջնելուն», զի էլ ո՞վ, ե՞րբ եւ որտե՞ղ, եթե ոչ «մի հրեա», կուրսային-ուսանողական մի միջադեպի ժամանակ կարող էր բացել հիշյալ հեղինակի՝ այն ժամանակ տակավին 19 տարեկան պարմանուհու աչքերը, սուգարքեն եւ միանշանակորեն պարզելու նրան «հայ մշավորականի իրական դեմքը»:

Կարելի է հոդվածի ամբողջ մի էջ զետեղել բոլոր ժամանակների համար արդիական հարցադրումով, թե ի՞նչ պիտի անի, նաեւ ինչ պիտի չանի հայ գրողը, եւ «էլ ո՞վ պիտի անի, եթե ոչ հայ գրողը»:

Կարելի է մամլո էջերում սեփական ժողովրդին, նրա մշավորականությանը, մայր բուհին, նրանում մի քանի սերունդ կրթած-դաստիարակած մի քանի սերունդ դասախոսների, եւ ինչո՞ւ ոչ՝ նաեւ հայոց Վեհափառի վրա թուր ու թվանք թափահարելու բովում, ափոթվել եւ աղաղակոնորոշել ընթերցողին այնպիսի մանրուքներով, ինչպիսիք են հակառակորդ հոդվածագրի աբխարհաքաղաքացիության վայրը (զի «Պասիվ ընթերցողին» Ս. Վիրաբի հոդվածում ոչ մի տեղ չի նշված, որ նա մայր բուհի դասախոս է) եւ սեռը (զի Ս. Վիրաբը ոչ թե «պ» է, այլ՝ «տ»):

Կարելի է «ուղղակի զարմանք հարուցող եռանդով» զարմանալ, թե ինչո՞ւ է «պ. Ս. Վիրաբը», որ նույն ինքն տ. Վիրաբն է, «պաշտպանում ժողովրդի աչքում այնպիսի վարկաբեկված մի անձնավորության, ինչպիսին է Հրանտ Մաթեւոսյանը», միամիտ մոռացության տալով այն, որ ոչ մեկին չի տրված ողջ ժողովրդի անունից խոսելու իրավունքը, իսկ նման գերչափազանցությունները, անկախ թե ո՞ւմ եւ ինչի՞ն են վերաբերում, միշտ էլ հակադարձ գրգիռներ են առաջացնում հենց նույն ժողովրդի մոտ:

Այո, շատ բան «կարելի է», հատկապես այս խաժամուժային օրերի անմախիր կենսոլորտում, որի պղտոր ջրերում որսած լավագույն ձուկը, թերեւս, սեփական անձի, եսակենտրոնության պատվանդանն է, իր այլազան մանր ու խոշոր «համեմունքներով»:

Սակայն զավեշտալին Գ. Նիկողոսյանի խնդրո առարկա հոդվածում այն է, որ իր՝ «հակամաքեւոսյանական» դիրքերում գտնվող հոդվածագրի ուշադրությունից, ասես, «պատահաբար» վրիպել է այն հանգամանքը, որ հիշատակած Թամար Հովհաննիսյանի ճնշադատական հոդվածի համար շարժառիթ է հանդիսացել Գ. Նիկողոսյանի կողմից այդքան ատելի Հ. Մաթեւոսյանի հետ «Շուրանանք այս տասը տարին» խորագրով հարցազրույցը («Հայաստանի Հանրապետություն», 04.02.1998):

Բավականաչափ պարզունակ եւ ծանոթ հոգեբանության արգասիք է դա: Գոյություն ունի մարդկային տեսակ, որն իր մղած արդար թե անարդար պայքարում ցանկանում է տեսնել միայն սեփական անձը, այն ակնկալությամբ, որ եթե բախտի անիվը մի օր պտտվի իր բաղձալի ուղղությամբ, ինքը կուրծք ծեծելով «սեփականաբնորհի» իր «հաղթանակը»:

_Ինչ խոսք, Շիրազին բակում տեսնելու նոստալգիան գեղեցիկ զգացողություն է: Սակայն նաեւ Չարենցի (եւ ոչ միայն նրա անձի, այլ Չարենց երեւույթի) հանդեպ եւս կարոտախտ ունենալու պարագայում, եւ նրան նվիրված հոբելյանական միջոցառումներին մասնակից-ականատես լինելու դեպքում, հնարավոր չէ չտեսնել-լռել այն մասին, թե միտումնավոր կերպով ինչպես եւ «ինչ ուղղությամբ» նսեմացվեց-արժեզրկվեց մեծ պոետը: Երեւույթ, որի «գլխավոր դիրիժորներից» մեկը Հայաստանի գրողների միության նախագահն էր:

Սակայն Գ. Նիկողոսյանն իր զայրույթի տարերքում տարօրինակաբար «մոռացության է» մատնում սույն հանգամանքը եւս: Եվ իսկապես, այսօր, հատկապես նախագահական ընտրությունների նախօրյակին, երբ երկրի համար պատվարժան նախագահ ընտրելու պահին մեկտեղ ոմանց համար նաեւ սեփական շահագրգիռ ու այլազան նպատակների իրագործումը որսալու պահն է նույնպես, մի՞թե Չարենցին հիշելու եւ նրա մասին խոսելու ժամանակն է...

Պակաս զավեշտալի չէ (եւ խորհրդանշական է նաեւ) այն, որ «հակամաքեւոսյանական» բանակին հավատարմագրված հեղինակը հենց իր հակառակորդի դիրքերից, Հրանտ Մաթեւոսյանի մտքերին հույժ ներդաշնակ եւ Հրանտ Մաթեւոսյանի բառերին հույժ համահունչ՝ կեղտաջուր է լցնում հայ մշավորականության վրա: Բերենք եւս մեկ օրինակ. «Ոչ միայն այսօրվա մշավորականի, այլեւ ընդհանրապես մշավորականի, բանականության ձայնը չի լսվում... Չեմ վիրավորում. չի լսվում, որովհետեւ չի լսվում»- Հրանտ Մաթեւոսյան («Հայաստանի Հանրապետություն», 04.02.98 թ.): «Եվ դեռ որոշ մարդիկ հանկարծ գրում են, թե մշավորականը չի լռում»-Գ. Նիկողոսյան («Ազգ», 16.03.98 թ.): Հիշեցնենք ընթերցողին, որ սույն տեսակետն էր մատուցված Թ. Հովհաննիսյանի «Մշավորականը չի լռում, մշավորականին կարելի է լռեցնել» հրապարակման մեջ («Ազգ», 25.02.98 թ.), որի ողջ փաստարկումները եւ իմաստը՝ Հ. Մաթեւոսյանի հիշյալ հարցազրույցում արտահայտված մշավորական-արվեստագետի թերագնահատման ճնշադատություններն էին:

Անշուշտ, մեկ այլ հոդվածագրի տեսակետի դեմ անձնական, թե հենց սեփական թշնամու մտքերով մարտնչելը ցանկացած մարդու ազատ ընտրության հարց է: Սակայն մի բան է ափոթում Գ. Նիկողոսյանը. ոչ թե «որոշ» մարդիկ են գրում այդ մասին, այլ շատ էլ լավ որոշակի, եւ ոչ թե «հանկարծ» են գրում, այլ՝ տարիների ընթացքում իրենց բազում մշակութաբանական եւ հրապարակախոսական ելույթներում:

Պարզորոշ է, որ Հ. Օրբելու, պատմական մատերիալիզմի, Վեհափառի (եւ այլ ու այլ) բազմաթիր-լայնածավալ եւ խորընդգրկուն տարերքում մարտնչող տիկնոջ համար դժվար թե գոյություն ունենան մանր նախանձախնդրության հարցեր: Ինչպես եւ թափանցիկորեն պարզ է այն, որ Թ. Հովհաննիսյանի հիշատակած հոդվածը ոմանց ակնբախորեն գրգռել է հեղինակի՝ եւ ոչ մի անուն չմատնանշելու դիրքորոշմամբ, որն արտահայտված էր հետեւյալ ենթավերնագրում. «Հիմք ընդունելով այն հայեցակետը, որ երեւույթն ինքնին առավել խոր եւ ընդգրկուն հասկացություն է, քան առանձին վերցված մարդ անհատը, սույն հրապարակման մեջ անուններ չեն մատնանշվում: Երեկ եղել են նրանք, այսօր մենք ենք, վաղը կգան մյուսները: Փորձենք զննել էությունը»: Մինչդեռ կան մարդիկ, որոնք հատկապես այս օրերի առանց այդ էլ գերթեժացած մթնոլորտում ներքին բավարարվածություն են զգում միայն այն ժամանակ, երբ մամլո էջերում տեսնում են իրենց «զոհերի» մատնացույց եղած անունները:

Սույն դիտարկումների ծիրում հատկանշական է նաեւ այն, որ Գ. Նիկողոսյանը հասկանալի դիտումնավորությամբ շրջանցել է նաեւ ոչ պակաս կարեւորություն ունեցող մի քանի այլ փաստ: Այն, օրինակ, որ արժարվող հարցի մտազննումների դաշտին են պատկանում նաեւ Արեւշատ Ավագյանի «Մշավորականի խիղճն ու կոչումը» («Ազգ», 19.02. 98 թ.), Հակոբ Սրապյանի «Եվ անպատեհ կերպով չբացեմ բերաններս՝ ինքը բարոյականության դաստ տալու միմյանց» («Ազգ», 06.03.98 թ.) հոդվածները, մանրամասնորեն ընտրելով լոկ այն, ինչը պետք էր իրեն եւ այն էլ մատուցել դրանք իր հոդվածում կամ՝ ինչպես արդեն նշեցինք, հենց իր հակառակորդի դիրքերից, կամ էլ իրականությունից զեղված շեշտադրումներով: Ցավոք, միայն մի բանում կարելի է համաձայնել հեղինակի հետ. իրոպես, էլ ո՞վ պիտի, ո՞վ կարող է «խավարի թագավորության» մեջ մաթեմատիկական ամենատես աչքի ճշգրտությամբ հաշվարկված լույսի «հատուկենտ» շողերը ոսնատակ տալով, ժողովրդի, ազգի ճգնաժամային պահին «դարանակալ հարձակվածել նրան թիկունքից»: Ո՞վ ...իհարկե՝ հենց «իր հարազատ սերմը»:

Հ. Գ. Վերջերս «Ազգ» օրաթերթը մշակույթի իր էջում մի շարք հրապարակումներով արձագանքեց մեր մամուլում ծավալված «մաթեւոսյանական-հակամաթեւոսյանական» «պայքարի» նյութին, ընթերցողի դատին հանձնելով երկկողմանի կարծիքներ պարունակող հոդվածներ:

«Ազգ»-ի նպատակն էր խնդրո առարկա տարակարծիքի հենքի վրա արծարծել մարդկային, գրողական, ժուռնալիստիկական էթիկային հարող առավել լայն, անձնականից վեր ընդգրկվող խնդիրներ: Դրանց թվում՝ ընթերցողին, ուսանողին հարգելու, այսօրվա հայ գրականության դասագրքում արդեն իսկ տեղ գտած հայ ժամանակակից գրողի ստեղծագործության նկատմամբ տարրական ակնածանքի սերմանելու, մեզանում այսօր առկա մի շարք հիվանդագին երեւույթների հնարավոր խորքը զննելու խնդիրները: Սակայն, ինչպես երեւում է, հեղինակներից ոմանք միտում չունեն հարելու սույն դիրքորոշմանը:

Արդ, ցանկություն ունենք հայտնելու մեր ընթերցողին, որ «Ազգ» թերթի մշակութային էջը հավակնություն չունի ներկայանալու որպես խնդրո առարկա հակամարտության «պայքարի դաշտ», ուստի եւ այս հոդվածով եզրափակում է հիշյալ նյութի վերաբերյալ իր հրապարակումները:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԲՈՒԾՔԱՍԱՐՏ

Արթուր Գրիգորյանի անվան մրցանակը

ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

1951 թվականին Ստեփանակերտ եկավ մեծն ծանրամարտիկ Սերգո Համբարձումյանը: Ոչ մինչ այդ, ոչ էլ դրանից հետո իմ քաղաքում չեմ տեսել նման համաժողովրդական ցնծություն: Կասա՞կ բան է Արցախ եկել ծանրամարտի աշխահի ռեկորդակիրը, որի անունը լեգենդով է պատված: Լեռնային Ղարաբաղի ֆիզկուլտուրայի եւ սպորտի մարզային կոմիտեի նախագահ Միխայիլ Կարաբեկովը աշխարհի ռեկորդակիրն ներկայացրեց արցախցի ծանրորդներին: Նրանց թվում էի նաեւ ես, որ նախօրեին Արցախի չեմպիոն էի դարձել ուժեղների մրցույթում: Ես 16 տարեկան էի եւ կյանքումս առաջին անգամ էի տեսնում ոչ միայն համաշխարհային մեծություն կենդանի աչքեսի, այլեւ... կենդանի երեւանցու:

Դիտելով այն կինոկադրերը, որոնք պատկերում էին հայ հերակլեսի քաջագործությունները, նրա հզոր կազմվածքը, այն, թե նա ինչպիսի հեշտությամբ էր ձախ ձեռքով պոկում 100 կիլոգրամանոց ծանրածողը, ես առաջին անգամ շոշափելիորեն զգացի հպարտություն իմ ժողովրդի համար: Ես ինձ որսացի այն մտքի վրա, որ հայրենասիրությունն հասկացությունը կարելի է բառացիորեն շոշափել ձեռքերով: Այդ գիշեր ես չկարողացա աչք փակել: Ես երջանիկ էի այն գիտակցությունից, որ մոլորակի ամենաուժեղ մարդկանց թվում, այնպիսի լեգենդար աչքեսների կողքին, ինչպիսիք են ամերիկացի Ջոն Դեւիսը, ուկրաինացի Յակով Կուցենկոն, ռուս Գրիգորի Նովակը, հայազգի Սերգո Համբարձումյանի անունն է:

Մեկ տարի անց ողջ աշխարհն իմացավ օլիմպիական չեմպիոններ դարձած մարմնամարզիկներ Հրանտ Շահինյանի եւ Ալբերտ Ազարյանի մարզական խիզախումների մասին: 1956 թվականին Մելբուռնում 16-րդ օլիմպիական խաղերի չեմպիոն դարձավ մեր ժամանակների ականավոր բոնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը: Նրա շնորհիվ էր, որ հայերն իրոք հիշեցին իրենց նշանավոր նախնիի Վարազդատ թագավորի մասին, որը հին աշխարհի օլիմպիական խաղերի վերջին չեմպիոնը դարձավ 393 թվականին:

Իմ սերնդի աչքի առջեւ հայ չեմպիոնների համաստեղության մեջ աճում էր վառ աստղերի թիվը: Եվ ամեն անգամ, որտեղ էլ որ գտնվեի, իմանալով մեր նորանուն հայրենակցի մասին, ուժերի հորդում էի զգում: Սիրտս լցվում էր հպարտությամբ ոչ այնքան սխրանքի գործած այս կամ այն մարզիկի համար, որքան իմ ողջ ժողովրդի համար: Իսկ աստղերն իրոք վառ էին, եւ իրոք նրանցից յուրաքանչյուրի հոգում սեփական ժողովրդի փոքրիկ պատկերն էր: Իսկ բուն համաստեղությունում, սկսած Վարազդատ թագավորից մինչեւ մեր օրերը, կարելի է տեսնել մեր ժողովրդի ընդհանրական դիմանկարը՝ նրա կայուն եւ կամային բնավորությամբ: Տիգրան Պետրոսյան եւ Դավիթ Համբարձումյան, Շավարշ Կարապետյան եւ Յուրի Վարդանյան, սամբոյի աշխարհի եռակի չեմպիոն Գուրգեն Թութխալյան եւ «Արարատ-73», եւ շատ շատերը:





Եվ ահա երկնակամարում հայտնվեց մի նոր աստղ՝ պրոֆեսիոնալ ռինգի արքա, թեթեւ քաշային կարգում աշխարհի վեցակի չեմպիոն Արթուր Գրիգորյանը:

Օրերս Համբուրգում (Գերմանիա) կայացավ աշխարհի առաջնության նրա 6-րդ մրցամարտը: Սակայն սկզբում մի փոքրիկ վերադարձ դեպի անցյալ: 1991 թ.-ին հեռավոր Ավստրալիայում ղարաբաղցի Արթուր Գրիգորյանը մտավ սիրողական բոնցքամարտի աշխարհի առաջնության եզրափակիչ, որտեղ նրա մրցակիցն էր գերմանացի Մարկո Ռուդոլֆը: Հանդիպումը համառ պայքարում անցավ: Ղարաբաղցին միավորներով պարտվեց եւ տուն վերադարձավ արծաթե մեդալով: Այդ ժամանակվանից շատ բան է փոխվել Արթուրի կյանքում: Նա ԽՍՀՄ եւ ԱՊՀ չեմպիոն դարձավ: Հաղթել է բազմաթիվ միջազգային մրցաշարերում, Գերմանիայի բաց առաջնության չեմպիոնն է: Վերջապես տեղափոխվեց պրոֆեսիոնալ բոնցքամարտ: Եվ այդ ամբողջ 7 տարվա ընթացքում Արթուրը, տանելով հաղթանակ հաղթանակի ետեւից, երազում էր այն օրվա մասին, երբ ճակատագիրը ռինգում նրա դեմ կհանի սիրողների շրջանում աշխարհի չեմպիոն գերմանացուն: Թվում էր, թե Արթուրը ամբողջ ժամանակ այդ հանդիպմանն էր պատրաստվում: Եվ ահա 1998 թ.-ի մարտի 14-ին Համբուրգի ժամանակով ժամը 20:00-ին սկսվեց երկար սպասված մարտը: Պրոֆեսիոնալ ռինգում Արթուրի համար 6-րդ անընդմեջ մրցամարտը: Ինձ բախտ վիճակվեց իմ հայրենակիցներին առաջինը պատմել դեռեւս կյանքի օրոք լեգենդ դարձած արցախցի աշխարհի հնգակի չեմպիոնի մասին:

Այնպես ստացվեց, որ եթե կարելի է այդպես արտահայտվել, իրադարձությունների հետագա ընթացքի «լրատվական պատասխանատվությունն» ընկած էր իմ ուսերին: Ես մշտապես Համբուրգի հետ կապի մեջ էի: Կանոնավոր կերպով տանը, որսալով պահը, արդեն որերորդ անգամ դիտում էի նրա բոլոր հինգ մենամարտերի տեսաժապավենը: Եվ երբ իմացա, որ 6-րդ մենամարտը կայանալու է մարտի 14-ին, կորցրի հանգիստս: Մեր ամբողջ ժողովուրդը, թվում էր, վերացել էր այս աշխարհից: Համառորեն հետեւում է բոնցքամարտի ռինգից ոչ պակաս զրավիչ մենամարտի՝ Հայաստանի նախագահի թեկնածուների միջեւ: Եվ ահա հանկարծ ժամանակային այսպիսի համընկնում. մեր հայրենակցի 6-րդ մրցամարտը կանցկացվի ընտրություններից երկու օր առաջ:

Մրցամարտի նախօրեին ես հեռախոսազրույց ունեցա աշխարհի հնգակի չեմպիոնի կնոջ՝ Օլգա Գրիգորյանի հետ (նա ծնունդով Հադրութի շրջանի Դոլանլար գյուղից է): Օլգան ասաց, որ Արթուրը նախապատրաստվում է մենամարտին եւ հիանալի մարզավիճակում է: «Այնպիսի տպավորություն է, ավելացրեց նա, որ բառացիորեն փութացնում է ժամանակը, ցանկանում է հնարավորին չափ շուտ հանդիպել կոտբուսցի Մարկո Ռուդոլֆի հետ արդեն պրոֆեսիոնալ ռինգում»: Ես խնդրեցի Արթուրին հաղորդել, որպեսզի նա մենամարտից անմիջապես հետո զանգահարի ինձ, քանի որ ողջ Հայաստանը սպասում է մրցամարտի արդյունքին:

Օլգան իր խոսքի տերն էր: Արթուրը կատարեց խնդրանքս: Նա խոսում էր հանգիստ, վստահ: Ես հազիվ էի զսպում ուրախության արցունքներս: Ինձ հետ խոսում էր պրոֆեսիոնալ բոնցքամարտի աշխարհի արդեն վեցակի չեմպիոնը: Ես ոչ մի գրառում չկատարեցի: Վստահ էի, որ ոչինչ չէի մոռանա: Այսինքն՝ մոռանալու բան էլ չկար: Իր՝ չեմպիոնի պարզ ռեպորտաժն էր մենամարտից հետո:

- Առաջին չորս ռաունդի ընթացքում հետախուզում էինք մեկմեկու: Ամեն ինչ ընթանում էր հարթ ու հանգիստ: Ես ավելի ու ավելի էի ուսումնասիրում մրցակցիս, հիշելով Ավստրալիայի՝ ինձ համար դրամատիկ այն հանդիպումը: Չորրորդ ռաունդում ես արդեն գիտեի, որ նրան կարող եմ պարտադրել «իմ» մարտը: Հինգերորդ ռաունդում հարվածաշարից հետո նրան նոկդաուն ուղարկեցի: Վեցերորդ ռաունդի երկրորդ րոպեին, ինչ-որ անհարմար եմ զգում այդ մասին ասել, դե, նոկաուտ արեցի:

- Իսկ ինչո՞վ ես այժմ զբաղվում:

- Նախապատրաստվում եմ 7-րդ եզրափակիչին:

- Ե՞րբ կկայանա այն:

- Հնարավոր է՝ երկու ամիս անց: Հնարավոր է՝ կես տարի անց: Ես պարտավոր եմ պատրաստ լինել: Եվ իհարկե, ես պետք է, ինչպես պայմանավորվել ենք, ժամանակ գտնեմ հարազատ Ղարաբաղ մեկնելու համար: Առավել եւս, որ ծեզանից բացի ստացել եմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի, վարչապետի եւ պաշտպանության նախարարի հրավերները:

Խմբագրության կողմից:

Ինչպես հայտնի դարձավ, իր շնորհավորական հեռագրում ԼՂՀ-ի պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը հայտնել է, որ նախարարության հրամանով հանրապետության զինված ուժերի բոնցքամարտի մրցումներում կսահմանվի աշխարհի վեցակի չեմպիոն Արթուր Գրիգորյանի անվան մրցանակ եւ, որ առաջին մրցումների բացման պատիվը վիճակված է իրեն չեմպիոնին:

ՀԱՕԿ

ՀԱՕԿ-ների ղեկավարների հանդիպումը

Ինչպես հայտնեցին ՀԱՕԿ-ի լրատվական ծառայությունից, Միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչի հրավերով մարտի 18-19-ը Շվեյցարիայի Լոզան քաղաքում կկայանա հանդիպում, որին կմասնակցեն նախկին խորհրդային 15 հանրապետությունների ազգային օլիմպիական կոմիտեների նախագահները եւ գլխավոր քարտուղարները:

Շվեյցարիա են մեկնել նաեւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Ալեքսան Ավետիսյանը եւ գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանը: Վաղը՝ մարտի 19-ի առավոտյան կկայանա մեր պատվիրակների եւ ՀՕԿ-ի նախագահ Սամարանչի հանդիպումը:

Ըստ նախնական տվյալների, Լոզանում կայանալիք հանդիպման նպատակն է օգնել նախկին միութենական ազգային օլիմպիական կոմիտեներին՝ դուրս գալու ծանր վիճակից, վերականգնել նախկինում ունեցած լավ ավանդույթները, օգնել բարձրակարգ մարզիկներին՝ պատրաստվելու եւ մասնակցելու կարեւորագույն մրցումներին:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

Նախապատրաստվելով Եվրոպայի առաջնությանը

Այսօրվանից Ճաղկաձորի օլիմպիական մարզաբազայում իր 15-օրյա ուսումնամարզական հավաքը կանցկացնի ծանրամարտի Հայաստանի հավաքականը:

Ճաղկաձորում կնախապատրաստվեն Եվրոպայի հերթական առաջնության մասնակից մեր յոթ ծանրորդները՝ էդուարդ Դարբինյանը (62 կգ քաշային կարգ, երեւան), Հովհաննես Ամրեյանը (69 կգ, Գյումրի), Խաչատուր Քյափանակցյանը (72 կգ, Գյումրի), Արսեն Մելիքյանը (77 կգ, երեւան), Հակոբ Փիլոսյանը (94 կգ, Գյումրի), Ատոմ Դանիելյանը (105 կգ-ից բարձր, երեւան), Արա Վարդանյանը (105 կգ-ից բարձր, Արմավիր): Հավաքին կմասնակցի նաեւ երեւանցի գերծանր քաշային Սոս Խաչատրյանը:

Ճաղկաձորյան հավաքից հետո մեր ծանրորդները կմեկնեն Սոֆիա, որտեղ կբարունակեն աշխարհամասի առաջնության նախապատրաստությունը: Իսկ հետո՝ Գերմանիա, որտեղ Ռիգա քաղաքում կանցկացվի եվրոպական կարեւոր ստուգատեսը:

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Հաղթեցին 2 փուլերում

Երեւան վերադարձավ Հայաստանի հավաքականը, որը մասնակցում էր Իրանական հեղափոխության 19-ամյակին նվիրված «Արեւածագի 10 օրը» տոնակատարության ծրագրում ընդգրկված մրցումներին:

Սիվազ քաղաքում անցկացված բազմօրյա հեծանվավազքում հանդես եկան 11 թիմեր (Իրանի 8, Հայաստանի, Ադրբեջանի եւ Տաջիկստանի 1-ական): Մրցուղին 700 կմ էր, այն բաժանված էր 7 փուլի:

Թիմային հաշվարկում հաղթեց Թավրիզի հավաքականը: Հայաստանի հավաքականը գրավեց 4-րդ տեղը:

Անհատական մրցապայքարում մեր թիմի 5 անդամներից առավել հաջող հանդես եկավ Վազգեն Ղուլիջանյանը: Նա գրավեց ընդհանուր 4-րդ տեղը՝ միայն մի փոքր զիջելով 3-րդ մրցանակակիր դարձած մարզիկին: Ղուլիջանյանը նաեւ առաջին տեղը գրավեց 4-րդ փուլում, որը 135 կմ էր: Հնարավորին չնչին [illegible] 3-րդ փուլում, որը ամենաերկարն էր (165 կմ) հաղթող դարձավ 17-ամյա Վահագն Կարապետյանը:

Փարիզ-Նիցցա

Ավարտվեց Փարիզ-Նիցցա ավանդական բազմօրյա հեծանվավազքը:

Վերջին՝ 8-րդ փուլում հաղթեց Քրիսթոֆ Կոռելին, որը եզրագծում միայն մի քանի սանտիմետրով առաջ անցավ մրցակցից:

Իսկ ընդհանուր հաշվարկում հեծանվավազքի հաղթող դարձավ Ֆրանկ վան դեն Բրուքը: Բելգիացի մարզիկը առաջին իսկ փուլից գլխավորեց մրցարշավը ու այդպես էլ իր դիրքերը չզիջեց մինչեւ վերջ: Երկրորդ տեղը գրավեց ֆրանսիացի Լորան Ժելաբերը, որին վերջերս աշխարհի ուժեղագույն հեծանվորդ ճանաչեց մարզաձեւի միջազգային ֆեդերացիան: Երրորդ տեղում է Մարսելինո Գարսիան (Իսպանիա):



ՅՍՇԿԱՎԱՔ

Հաստատեցին իրենց բարձր կարգը

Հոլանդիայի Հերենվեն քաղաքում ավարտվեց յսշկավազքի բազմամարտի աշխարհի հերթական առաջնությունը: Ե՛վ տղամարդկանց, Ե՛ւ կանանց մրցումներում հաղթեցին ֆավորիտները:

Տղամարդկանց մրցապայքարում իր բարձր կարգը հաստատեց օլիմպիական չեմպիոն, հոլանդացի Իբս Պոստման, որն այստեղ նվաճեց նաեւ աշխարհի չեմպիոնի կոչումը: Նա հաղթեց երեք մրցաշարածություններում, իսկ մարաթոնում (10000 մ) գրավեց 4-րդ տեղը (այստեղ լավագույնը բելգիացի Բարտ Վելդկամպն էր): 24-ամյա մարզիկը դասական բազմամարտում աշխարհի նոր ռեկորդ սահմանեց՝ հավաքելով 153,367 միավոր:

Աշխարհի 3 նոր ռեկորդ սահմանեց նաեւ կանանց բազմամարտի հաղթող Գունդա Նիման Շրինիեմանը (Գերմանիա): Նա նախկին նվաճումները գերազանցեց 3000 եւ 5000 մ մրցաշարածություններում, ինչպես նաեւ 4 մրցաձեւերի ընդհանուր գումարում՝ 163, 320 միավոր: Օլիմպիական խաղերի եւ աշխարհի բազմակի չեմպիոնուհին փաստորեն հաղթեց բացահայտ առավելությամբ:

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքով

ԳԵՐՄԱՆԻԱ

Ընտրություններին մասնակցեց 73 հոգի

Գերմանիայում ՀՀ նախագահական ընտրությունների միակ տեղամասից՝ Բոննում գտնվող ՀՀ դեսպանությունից, մարտի 16-ի երեկոյան ժամը 23:30-ին (Երևանի ժամանակով ժամը 2:30-ին) մեզ հայտնեցին, որ ընտրություններին մասնակցել է 73 հոգի: ՀՀ քաղաքացիներից երկուսի քվեաթերթիկը համարվել է անվավեր, 46-ն իր ձայնը տվել է Ռոբերտ Քոչարյանին, 14-ը Կարեն Դեմիրճյանին, 8-ը Վազգեն Մանուկյանին, 2-ը Դավիթ Շահնազարյանին, 1-ը Արամ Սարգսյանին:

Մինչեւ իմ ընտրելու պահը, ժամը 19:30-ին, Գերմանիայում ՀՀ դեսպան, ընտրական հանձնաժողովի նախագահ Աշոտ Ոսկանյանի ասելով, 70 հոգի արդեն ընտրել էր: Պրն դեսպանը 100-ից չանցնող թիվ էր ակնկալում, թեեւ ինչպես արդեն տեղեկացրել ենք, Գերմանիայում ժամանակավոր եւ մշտական հաշվառման մեջ է ՀՀ 500 քաղաքացի, չհաշված քաղաքական ապաստանյալներին: Ի դեպ, նրանցից մոտ 15-ը, հանձնաժողովի ասելով, ներկայացել էր ու ՀՀ քաղաքացու իր պարտքը կատարել: Պրն Ոսկանյանը Գերմանիայի ընտրազանգվածը .պասիվ չհամարեց. կային ընտրողներ հեռավոր քաղաքներից՝ Համբուրգից, Մյունխենից, ասել է թե հեռվում գտնվող ՀՀ քաղաքացիների մեջ էլ ընտրություններին մասնակցելու ցանկություն, ձգտում կա:

Ընտրողներին հնարավորություն էր տրվել քվեարկելու անձը հաստատող երեք տիպի փաստաթղթով՝ ՀՀ կապույտ անձնագրով, հին անձնագրով (Խորհրդային Հայաստանի կնիքով), ՀՀ-ի զինվորական գրքույկներով:

Ընտրատեղամասում գտնվելու պահին չնկատեցի, որ ընտրողներից որեւէ մեկը ցանկություն հայտներ ծանոթանալու նախագահության թեկնածուների ծրագրահենքին: Նախորդ գիշերին՝ ուշ էին ընտրելու: «Ում ճանաչում ենք», բացականչեց երիտասարդ մի կին եւ ասաց, թե առավոտյան խոսել է Երեւանում աշխատող ծնողների հետ, որոնք իրեն ուղղություն են տվել՝ «ընտրիր Ռոբերտ Քոչարյանին»:

Հանձնաժողովի նախագահի ասելով, որեւէ արտառոց դեպք չի եղել: Ինչո՞ւ դիտորդներ, վստահված անձինք չկան՝ իմ հարցին հանձնաժողովի նախագահը բացատրեց, թե որեւէ մեկը հայտ չի ներկայացրել: Պրն Ոսկանյանն էլ շատերի նման ընտրությունների երկրորդ փուլ է նախատեսում: Ինչեւէ, սպասենք արդյունքներին: •

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բոնն

ԱՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունները՝ ՀՀ օրենսդրությանը եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան

Միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդների եզրակացությունը

Հայաստանի Հանրապետության նախագահի 1998 թվականի մարտի 16-ին անցկացվող ընտրությունների ընթացքը դիտարկելու համար հրավերով ժամանեց ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունը հետեւյալ կազմով. Վիտալի Նիկոլաեւիչ Կլիմով՝ ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամ (պատվիրակության ղեկավար), Ալեքսանդր Վիկտորովիչ Կոզիր՝ Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի պատգամավոր, Մելիք Կառլի Ռայիսյան՝ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Բեյբութ Հազիզի Ժուսուպով՝ Ղազախստանի Հանրապետության Սենատի պատգամավոր:

Աշխատանքի ընթացքում ԱՊՀ մասնակից պետությունների ՄՎ դիտորդների պատվիրակության անդամները եղան էջմիածին, Երեւան, Աբովյան, Սեւան քաղաքների, ինչպես նաեւ էջմիածնի շրջանի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի 15 ընտրական տեղամասերում, որտեղ հնարավորություն ունեցան ժողովրդավարորեն բաց մթնոլորտում դիտարկել ընտրությունների ընթացքը, զրուցել ընտրողների, ընտրական հանձնաժողովների անդամների եւ նախագահության թեկնածուների վստահված անձանց հետ, ծանոթանալ անհրաժեշտ փաստաթղթերին:

Պատվիրակության անդամներն այցելեցին 6/2 (երկու անգամ՝ քվեարկության սկզբին, ինչպես նաեւ քվեները հաշվելիս), 5/7, 11/19, 7/6, 3/2, 2/10, 2/5, 2/6, 2/9, 2/1, 3/24, 1/18, 1/16, 45/1 ընտրական տեղամասեր:

Իր դիտարկումների հիման վրա ԱՊՀ մասնակից պետությունների ՄՎ պատվիրակությունը նշում է, որ ընտրություններն անցան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ «Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» օրենքի շրջանակներում, ժողովրդավարական իրադրության մեջ, կազմակերպված, ընտրողների բավականաչափ ակտիվության պայմաններում եւ հնարավորություն տվեցին նրանց կամքի ազատ դրսեւորմանը Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածության հարցում: Ընտրությունների ընթացքը դիտարկելիս ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակության անդամները չհանդիպեցին օրենքի խախտումների: Տեխնիկական բնույթի խախտման միակ դեպքը գրանցվեց 2/1 ընտրական տեղամասում, որտեղ ընտրողների կուտակում էր առաջացել քվեաթերթիկների հանձնման սեղանների առջեւ:

Հիմնվելով վերը շարադրվածի վրա, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդների պատվիրակությունն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության արտահերթ ընտրություններն անցկացվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան եւ ամբողջությամբ վերցված համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին:

Եզրակացությունը ՀՀ արտգործնախարարության միջոցով հանձնված է Միավորված ազգերի կազ-

Ընտրատեղամասերում չնկատված կեղծիք անելու համար Կիսյի կամ Կոպերֆիլդի վարպետությունն էր անհրաժեշտ

17 ՄԱՐՏ, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: BBC ռադիոկայանի հատուկ թղթակից Անդրեյ Օսպալսկին, որն արդեն մի քանի օր Երեւանում է գտնվում նախագահական ընտրություններին հետեւելու եւ լուսաբանելու նպատակով, վկայում է, որ ընտրությունների ավարտից 1 ժամ առաջ արված նախագահական 5 թեկնածուների հայտարարությունը հնչեց որպես որոտ՝ պարզ երկնքից թե՛ լրագրողների, եւ թե՛ միջազգային դիտորդների համար, քանի որ մինչ այդ կողմից եւ զանգվածային խախտումների դեպքերի մասին ոչինչ հայտնի չի եղել: Համարյա ողջ գիշեր լրագրողներն ու դիտորդները այցելել են ընտրատեղամասեր: Որոշ տեղերում իրոք իրավիճակը կասկածելի էր թվում: Օրինակ, Երեւանի հեռավոր արվարձաններից մեկում քվեարկության ավարտից հետո ձայների հաշվումը 2 ժամ շարունակ, չգիտես ինչու, չէր սկսվել: Եվ հնարավոր չեղավ պարզորոշ պատասխան ստանալ այն հարցին, թե ի՞նչ է կատարվում: Ակամա կասկած էր առաջանում, թե հանձնաժողովի նախագահը սպասում է մինչեւ դիտորդների համբերությունը հատնի եւ նրանք լքեն շենքը: Մեկ այլ տեղում մուգ թիկնոցներ հագած չափից դուրս շատ թիկնեղ տղաներ էին դեսուդեն գնում եւ այլն: Սակայն անշահագրգիռ անձանց վկայություններով հաջողվեց հաստատել միայն մեկ լուրջ միջադեպ, որի ժամանակ Երեւանի թիվ 155 դպրոցում Կարեն Դեմիրճյանի ներկայացուցչուհին ենթարկվել էր անհայտ անձանց հարձակման: Այդ կապակցությամբ BBC-ի հատուկ թղթակիցը Կարեն Դեմիրճյանի մամլո քարտուղար Արմեն Վալեսյանին հարցրեց, թե ովքե՞ր էին հարձակվողները, արդյո՞ք նրանք պաշտոնական անձինք էին կամ քրեականներ: Եվ ստացավ պատասխան. «Տղաներ էին, այսպես ասած՝ մեր բակից»: Այդպես կարելի է նրանց բնութագրել: Անդրեյ Օսպալսկին վկայում է, սակայն, որ ընտրատեղամասեր գիշերային այցեր կատարելու ժամանակ տեսել է, որ ամենուրեք ներկա էին հակամարտ կողմերի ներկայացուցիչները, որոնք այնքան ուշադիր էին հետեւում միմյանց շարժումներին, որ թվում էր, թե հակառակորդին խաբելու համար պահանջվում է ոչ թե ծեռքի սովորական ճարտարություն, այլ նվազագույնը Իգոր Կիսյի կամ Դեյվիդ Կոպերֆիլդի վարպետությունը: Ըստ Օսպալսկու, մի բան է պարզ, որ հասարակությունը Հայաստանում խորապես պառակտված է եւ լարվածությունն այստեղ հասել է վտանգավոր չափերի: Լուրեր են պտտվում ընդդիմության կողմից ընտրությունների երկրորդ փուլը կամ ընդհանրապես ընտրությունները բոյկոտելու մասին, սակայն Ռոբերտ Քոչարյանի գլխավոր մրցակից Կարեն Դեմիրճյանը դեռեւս այդպիսի որոշում չի ընդունել:

Ըստ «Ազատության» ռադիոկայանի, օտարերկրացի դիտորդները տակավին խուսափում են հայտարարություններ անելուց, սակայն նրանցից ոմանք ակնարկում են, որ գրանցված օրինազանցությունները չեն կարող ազդել առաջին փուլի վերջնական արդյունքների վրա: Ըստ Ֆրանսպրեսի, եվրախորհրդի փորձագետ Բեռնար Օուենն ասել է, թե ընտրությունների առիթով շատ բողոքներ են ստացվել, սակայն դրանք իրավական ուժ չունեն, որովհետեւ ապացույցներ եւ փաստեր դեռեւս չեն ստացվել: Նա ասել է նաեւ, որ ցանկացած տեսակի ապացույց պետք է ներկայացվի համապատասխան իրավական մարմին: Ըստ «Լոս Անջելես թայմսի» թղթակից Ֆելինա Ուիլյամսի, դիտորդները նշել են, որ ընտրատեղամասերում էական խախտումներ չեն գրանցվել: Ուիլյամսը վկայում է, որ մարտի 16-ին հայ ընտրողների մեծ մասը խանդավառված էր եւ լավատեսորեն էր տրամադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 1998-1999 ուսումնական տարվա ընդունելությունը **մագիստրոսի կոչում** շնորհող հետեւյալ ծրագրերով՝

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համապատասխան ֆինանսավորման դեպքում, ընդունելություն կլինի նաեւ հետեւյալ ծրագրերով՝

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Բարձրագույն կրթությունը եւ անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **մայիսի 8-ը, ժ. 15⁰⁰**:

Տեղեկությունների համար դիմել՝
Երեւան. Մարշալ Բաղրամյան 40
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ընդունելության գրասենյակ (19)
Հեռ. 27-16-29

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունը հայտարարում է մրցութային ընդունելություն՝

1. դեսպանական անվտանգության աշխատակցի,

2. ընդունարանի քարտուղարի/դեսպանական անվտանգության աշխատակցի թափուր տեղերի համար:

Պահանջվում է անգլերենի իմացություն եւ նմանատիպ աշխատանքի փորձ:

Դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն, Բաղրամյան 18, կադրերի բաժին. հեռ. 52-46-61, 52-46-11 մինչեւ մարտի 20-ը:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
մեկ սենյականոց բն.
Նորքի IV զանգվածում,
հեռ. **64-88-85, 64-93-89:**

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:
Հեռ՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
2 սենյականոց բն., Արշակունյաց պող. 16ա, 4/3, քարե շենք, երկկողմանի պատշգամբ, 72/39 քմ
Հեռ. 56-50-46, 42-39-45

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
36x7,5x15 մ չափսերով երկաթե ճանդվող անգար, որը կարելի է օգտագործել որպես պահեստ, արտադրամաս, ինչպես նաեւ այլ նպատակներով: Անգարը տեղադրված է Երեւանի շրջանի Ջրաշեն գյուղում: Գինը՝ 2000 դոլար:
Հեռախոս **23-41-03, 57-42-46**

ՏՐՎՈՒՄ է ՎԱՐՁՈՎ
2 սենյականոց բնակարան, նկուղով, քաղաքի կենտրոնում:
Զանգահարել 23-56-78

Robin Generators **RGX3500**

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	ծախս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 կվտ	2.5 կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 կվտ	3.0 կվտ	6.1 ժ	

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 783. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության 17. 03. 1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@